# EuNC ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

# 2026-2027

European
Nazarene
College

MAKING A DIFFERENCE
THROUGH EDUCATION

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 2026-2027

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . . . . 3
Ա. EuNC -Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ . . . . . . 3
Բ. Ի՞ՆՉ Է EuNC-ԻՆ . . . . . . . . 4
Գ. ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ . . . . . . 5
Դ. EuNC-Ի ԱՐԺԵՔՆԵՐԸ . . . . . . . 6
Ե. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ . . . . . . 7
Զ. EuNC-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ . . . . . . 7
Է. ՃԱՆԱՉՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ . 10
Ը. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ . 12
II. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ . . . . . 13
Ա. ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ . . 13
1. Ընդունելության Պահանջները . . 13
2. Հասանելիության Հավասարություն . 14
3. Ընդունելության Տարբերակները . . . 15
4. Ուսանողի Պատասխանատվությունը . . 16
5. Օգտագործվող Ուղեցույցը և Դասացուցակը . 17
6. Ուսումնական Տարվա Սահմանումը . . 18
7. Արտաքին Ուսուցման Արդյունքների Ճանաչում . 18
8. Կրթության Տևողությունը . . . . 19
9. Հեռացում EuNC-ից . . . . . 19
Բ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ . . . . 19
1. Դասալսումներ Կամ Աուդիտ . . . . 19
2. Դասընթացից Հրաժարվելը . . . . 20
3. Դասընթացից Դուրս Գալը . . . . 20
4. Դասընթացը Կրկնելու Հնարավորություն . . 20
Գ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՅԱՆՔ . . . . . . 20
1. Ակադեմիական Ծանրաբեռնվածություն . . 21
2. Ակադեմիական Արձակուրդ . . . . 21
3. Ակադեմիական Ազնվություն . . . . 22
4. Մտավոր Սեփականություն . . . 23
5. Լեզվի Հմտություններ և Ակադեմիական Ոճ . 23
6. Դասերի Հաճախումը . . . . 23
7. Առաջադրանքների Ուշացումը . . . . 24
8. Հետաձգված Վերջնական Գնահատական

(Նախկինում Անավարտ Գնահատական) . . . 24
9. Բացառիկ Հանգամանքների Համար
Նախատեսված Դրույթներ . . . . . . . 25
10. Դասընթացի Գնահատումը . . . . . . 25
11.Դասընթացների դասավանդման մեթոդները . . 25
12. Ուսուցման Ավարտի Վկայական . . . . 27
13. Ակադեմիական Արձանագրություններ . . . 28
Դ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ . . . . . . . . . . 28
1. Գնահատման Համակարգը . . . . . . 28
2. Գերազանցության Դիպլոմներ . . . . . . 29
Ե. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԸ . . . 30
III. ՖԻՆԱՆՍՆԵՐ . . . . . . . . . . 32
IV.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ . . . 35
V. EuNC-ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ . . . . 39
Ա. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ . . 39
Բ. EuNC-Ն ԵՎ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ . . . 40
Գ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ EuNC-ում . . . 41
1. Նպատակը . . . . . . . . . . 41
2. Ընդհանուր Ակնարկ . . . . . . . 42
VI. EuNC-ի ԾՐԱԳՐԵՐԸ . . . . . . . 46
Ա. ՀՈԳԵՎՈՐ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ (CSF) . . 46
Բ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԴԻՊԼՈՄ (DCM) . . . . . . . . . 48
Գ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ
ԴԻՊԼՈՄ (ADAT) . . . . . . . . . 51
VII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ . . . . . 56
VIII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ . . . . . 59
IX. ՔՈԼԵՋԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ . . . . . . . 80
Ա. EuNC-ի ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄ . . 80
Բ. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ . . . . . 80
X. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. . . . . . 89
XI. ՔՈԼԵՋԻ ԳԼԽԱՎՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱԶՄԸ . . . . . . . . . 92
XII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ . . . . 96
XIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . 98

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ա. EuNC-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**European Nazarene College-ի (EuNC)** առաքելությունը լավագույնս արտահայտված է հետևյալ հայտարարության մեջ. «Ծառայության Համար Պատրաստել Քրիստոսանման Աշակերտներ»:

**Հնարավորություն ընձեռող:** Սովորողի կրթությունը երբեք վերջնական նպատակ չէ, դա միջոց է, որը ուսանողին հնարավորություն է տալիս դառնալու այնպիսի մարդ, որը ծառայում է ուրիշներին:

***Քրիստոսանման աշակերտներ:*** EuNC-ի կողմից տրամադրվող կրթությունը հիմնված է աշակերտության վրա: Այս կրթության նպատակն է պատրաստել նրանց, ովքեր արդեն հասունացել են (և շարունակում են աճել), որպես՝ Քրիստոսի աշակերտներ, որպեսզի նրանք պատրաստ լինեն ավելի կոնկրետ քրիստոնեական ծառայության, որը պահանջում է հետագա աստվածաբանական գիտելիքներ, հասկացողություն և ավելի կոնկրետ հմտություններ: «Քրիստոսանման» բառերը ցույց են տալիս և՛ կրթության փոխակերպող բնույթը (հանգեցնում է ուսանողների փոփոխություններին՝ բովանդակություն, իրավասություն, բնավորություն և համատեքստ), և՛ այս Քոլեջի սրբության աստվածաբանական ավանդույթը:
**Ծառայության համար:** Մենք ծառայում ենք Աստծուն (մասնակցելով Նրա փրկագործական գործունեությանը աշխարհում) և մարդկանց (հայտարարելով Ավետարանը խոսքով և գործով) համատեքստում:

«EuNC 2030 Ամենք Միասին» ռազմավարական ծրագիրը ուրվագծում է մեր տեսլականը և գլխավոր ռազմավարական նպատակը.
«European Nazarene College-ը կդառնա Եվրասիայում Աստծո Թագավորության աճող եկեղեցու ավելի նշանակալից մասը, որը կհամագործակցի տեղական եկեղեցիների, շրջանների, տարածաշրջանի և այլ եկեղեցական և ծառայողական կառույցների հետ՝ Աստծո առաքելությունն իրականացնելու համար՝ պատրաստելով ազգերից Քրիստոսանման աշակերտներ»: (էջ 8)

# Բ. Ի՞ՆՉ Է EuNC-Ն

European Nazarene College -ը՝ հետբուհական պրոֆեսիոնալ աստվածաբանական և ծառայողական ուսումնական հաստատություն է, որն առաջարկում է մասնագիտական կրթություն, կապված քրիստոնեական ծառայության հետ: Նա զինում է անհատներին ապրելու իրենց կոչումով և պատրաստվելու քրիստոնեական ծառայության եկեղեցիներում և աշխարհում:

EuNC-ն **Նազովրեցու Եկեղեցու** կրթական հաստատություն է: EuNC-ի կրթական ծրագրերը արտացոլում են **Վեսլիական-Սրբության աստվածաբանական ժառանգությունը**, բայց ոչ բացառիկ ձևով: Մենք ընդգծում ենք, որ Աստծո շնորհին անվճար է բոլորի համար և անվճար բոլորի մեջ՝ նպատակ ունենալով նորոգելու ողջ ստեղծագործությունը և մարդկությունը Աստծո պատկերով (անձնական և սոցիալական սրբություն): Դա նաև ենթադրում է, որ EuNC-ի կողմից տրամադրվող կրթությունը համապատասխանում է Նազովրեցու Եկեղեցու կրթական պահանջներին՝ Եվրասիայի Տարածաշրջանում ձեռնադրված ծառայության համար:

Մենք հավատում ենք որ կրթությունը **փոխակերպող** է: Դա Աստծո պատկերով նորոգվելու անբաժանելի մասն է՝ փոփոխություն մտցնելու համար: Հետևաբար, կրթական նախաձեռնությունը պետք է իր արդյունքները կենտրոնացնի ուսուցողական համայնքի ամբողջական վերափոխման վրա, հասարակության վրա ազդեցություն գործելու և Աստծո կողմից ողջ ստեղծագործության նորացմանը մասնակցելու համար:

**EuNC-ն որպես ուսումնական հաստատություն, լիովին ապակենտրոնացված է, բազմազգ և բազմամշակութային է,** ունի ընդհանուր վարչակազմ և բազմաթիվ տարբեր Ուսումնական Կենտրոններ: Դա կրթական ցանց է, որը կազմված է դասախոսական կազմի անդամներից և ադմինիստրատորներից, ովքեր ապրում և ծառայում են տարբեր երկրներում և ուսանողներ, ովքեր հեռակա դրույքով սովորում են Ուսումնական Կենտրոններից մեկում: EuNC-ն մեկ դպրոց է հիմնական ուսումնական պլանով, մեկ ֆակուլտետով և մեկ ուսանողական կազմով՝ ինչպես հեռավար, այնպես էլ տեղում ուսուցման մատուցման ռեժիմներով: Մենք ընդունում ենք այն փաստը, որ մենք բազմազգ ենք, որն արտահայտվում է Քոլեջի կազմակերպչական կառուցվածքում, կառավարման և վարչակազմի մեջ: Մենք ծառայում ենք հիմնականում այն եկեղեցիներին, որտեղ հիմնել ենք Ուսումնական Կենտրոններ: EuNC-ին իր ծրագրերը առաջարկում է այդ երկրների լեզուներով: Ուսումնական ծրագիրը

հարմարեցված է յուրաքանչյուր մշակութային համատեքստին, որտեղ աշխատում է Քոլեջը:

Այս հասկացություններն ավելի մանրամասն ներկայացված են մեր «European Nazarene College -ի Կրթական Փիլիսոփայություն» փաստաթղթում:

EuNC-ն առաջարկում է Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (**ECTE**) կողմից **հավատարմագրված ծրագրեր՝** Հոգևոր Զնավորման Վկայական (60 ECTS), Քրիստոնեական Ծառայության Դիպլոմ (120 ECTS) և Կիրառական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմ (180 ECTS), **որոնք ճանաչված են** Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Գրանցամատյանում **(EQAR)**:

# Գ. ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

European Nazarene College-ը Նազովրեցու Եկեղեցու հաստատությունն է և արտացոլում է նրա հիմնական արժեքները. «Մենք քրիստոնյա ժողովուրդ ենք, մենք սուրբ ժողովուրդ ենք, մենք միսիոներական ժողովուրդ ենք:» Որպես այդպիսին, նրա ուսումնական ծրագիրը, ուսուցումը և վարքագծի չափանիշները առաջնորդվում են համաձայն Նազովրեցու Եկեղեցու Հավատքի Դրույթների: Ուսումնական ծրագիրը, դասավանդումը և վարքագծի չափանիշները ղեկավարվում են համաձայն Նազովրեցու Եկեղեցու Հավատքի Դրույթների:

Մենք հավատում ենք՝

1. Մեկ Աստծո՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:
2. Հին և Նոր Կտակարանի Գրքերին, որոնք տրված են ամբողջական աստվածային ներշնչմամբ, պարունակում են ողջ ճշմարտությունը, որն անհրաժեշտ է հավատքի և քրիստոնեական կյանքի համար:
3. Մարդիկ ծնվում են ընկած բնությունով և հետևաբար հակված են դեպի չարը, և այդ ազդեցությունը շարունակական է:
4. Վերջնականորեն չզղջացող մարդիկ անհույս և հավերժ կորած են:
5. Հիսուս Քրիստոսի միջոցով քավությունը ողջ մարդկային ցեղի համար է, և ով որ ապաշխարում և հավատում է Տեր Հիսուս Քրիստոսին, արդարացված, վերածնված և փրկված է մեղքի իշխանությունից:
6. Հավատացյալները վերստին ծնունդից հետո, Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի միջոցով պետք է հասնեն ամբողջական սրբագործման:
7. Սուրբ Հոգին վկայում է վերստին ծննդի, ինչպես նաև

հավատացյալների ամբողջական սրբագործման մասին:
8. Մեր Տերը կվերադառնա, մեռելները հարություն կառնեն և տեղի կունենա վերջնական դատաստանը:

# Դ. EuNC-Ի ԱՐԺԵՔՆԵՐԸ

Ելնելով European Nazarene College-ի առաքելությունից, նկարագրից և համոզմունքից՝ Քոլեջի արժեքներն արտահայտված են հետևյալ չորս հայտարարություններում.

EuNC-ին **ուսանողական համայնք** է: Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, քոլեջում կան դասախոսներ և ուսանողներ, ովքեր գիտելիք են փնտրում Աստծո Արքայությունում օգտագործելու համար: Ինչ դեր կամ կոչում էլ որ ունենան նրա անդամները, նրանցից ակնկալվում է, որ նրանք սովորեն միմյանցից, աճեն հավատքի մեջ և փոխակերպվեն Քրիստոսի նմանությամբ:

Որպես ուսումնական համայնք EuNC-ին հավատարիմ է **ազնվությանը և ամբողջականությանը**: Մենք հավատում ենք, որ ոչ մի հավատքի ճամփորդություն և ոչ էլ ակադեմիական բարձունք չի կարելի միայնակ անցնել: Մենք հաշվետու ենք միմյանց մեր կրթության ժամանակ և մեր կյանքում: Ի վերջո, այն ինչ ազդում է մեզանից մեկի վրա, կազդի նաև բոլորիս վրա: Այս լույսի ներքո մենք ակադեմիական անազնվությունը դիտարկում ենք որպես մեր համայնքի ուղղակի խախտում և կարծում ենք, որ գիտելիքի և ճշմարտության անիմաստ կիսատ-պռատ ձգտումը վնասում է ինչպես անհատին, այնպես էլ սովորողների հանրությանը որպես ամբողջություն:

EuNC-ին **հավատքի համայնք** է: Մեր անդամներն անում են առավելագույնը միմյանց հարգելու և գնահատելու համար: Մենք անում ենք ամեն ինչ, որպես անհատներ և որպես համայնք, Աստծո հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու և Նրա նմանությունն արտացոլելու համար: Մեր ապրած կյանքը բաժանված չէ «սրբերի» և «աշխարհիկների»: Այն ամենը, ինչ մենք անում ենք, մենք անում ենք Աստծո առջև և քաջալերում ենք միմյանց ամբողջ սրտով փնտրել Նրան:

EuNC-ին պարտավորվում է լինել **երախտագիտության համայնք**: Մենք գիտակցում ենք, որ օգուտ ենք քաղում շատ ուրիշների զոհողություններից և պարտավորություններից: Քանի որ մեզ

վստահված է գիտելիքը, մենք ձգտում ենք այն կիսել և օգտագործել ծառայության մեջ: Մենք երախտապարտ ենք միմյանց վրա ունեցած ազդեցության համար և հրավիրում ենք ուրիշներին միանալ մեզ: Մենք հույս ունենք ավելի արդյունավետ կերպով ազդել մեզ շրջապատող աշխարհին,  քանի որ մենք սովորելու և աճելու հնարավորություն ունենք, մենք ցանկանում ենք այս օրհնությունը կիսել այլ մարդկանց հետ և այլ վայրերում:

## Ե. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

EuNC-ն ունի **Վարքագծի Կանոնագիրք,** որը սահմանում է բոլոր ուսանողների, դասախոսների և աշխատակիցների վարքային և ակադեմիական սպասումները՝ արտացոլելով մեր նվիրվածությունը Քրիստոսանման բնավորությանը և ուսումնական համայնքին: Այն ընդգրկում է հիմնական ոլորտներ, ներառյալ հոգևոր կյանքը, բազմազանության նկատմամբ հարգանքը, ակադեմիական ազնվությունը, մտավոր սեփականությունը, ակադեմիական ազատությունը, դասընթացներին մասնակցությունը և շահերի բախումը: Կանոնագիրքը նաև սահմանում է արգելված վարքագծերը և մանրամասնում բողոքների, կարգապահական միջոցառումների և վերականգնման ընթացակարգերը: Այն վերաբերում է բոլոր փոխազդեցություններին՝ թե՛ անձնական, թե՛ առցանց, և հիմնված է Նազովրեցու Եկեղեցու արժեքների և EuNC -ի առաքելության վրա՝ Քրիստոսանման աշակերտներին ծառայության  հնարավորություն տալու համար:

## Զ. EuNC-Ի   ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջը սկսվեց որպես տեսիլք 1963 թվականին, Գերմանիայում ծառայող Ջերալդ Ջոնսոնի և Իտալիայի Բոբ Սերատոյի մտքերում և սրտերում: Տեսլականն էր ծառայել մայրցամաքային Եվրոպային՝ վերապատրաս_ տելով մարդկանց ծառայության համար:  Քոլեջի շենքը գտան Շվեյցարիայով շրջապատված գերմանական փոքրիկ  Բյուսինգեն գյուղում: Քոլեջին վերաբերվող  պարտադիր պայմանն այն էր, որ նա պետք է լիներ միջազգային մաշտաբի, Անգլերեն լեզուն օգտագործեր որպես ուսուցման հիմնական լեզու, և պատրաստեր մարդկանց ձեռնադրության և քրիստոնեական ծառայության համար: Դպրոցը կոչվում էր Նազովրեցու Եվրոպական Աստվածաշնչյան Քոլեջ (ENBC) և

հիմնադրվել էր 1965 թվականին: Վեր. Ջոն Բ. Նիլսոնը դարձավ առաջին ռեկտոր և դասերը սկսվեցին 1966 թվականի Հունվարի 10-ին:

Իր գոյության ողջ ընթացքում Քոլեջը կենտրոնացած է եղել իր սկզբնական նպատակի իրականացման վրա: 1977թ. Դպրոցը միացավ Միդ Ամերիկա Նազովրեցու Համալսարանին (MNU), որի միջոցով այն կարողացավ առաջարկել հումանիտար գիտությունների բակալավրի լրիվ հավատարմագրված աստիճան: 1990-ականների սկզբին, որպես կոմունիստական սիստեմի անկման և Երկաթե Վարագույրի վերացման անմիջական հետևանք, դպրոցը սկսեց ընդլայնված աստվածաբանական կրթությունը և դրա միջոցով ընդլայնեց իր առաքելությունը, կրթական հնարավորություններ ընձեռելով տարբեր երկրներից ժամանած ուսանողներին, ովքեր չէին կարող Բյուսինգենում սովորել առկա և/կամ Անգլերեն լեզվով: 2001 թվականին քոլեջի անունը փոխվեց և դարձավ European Nazarene College (EuNC): Այս փոփոխությանը պատրաստվում էին արդեն մի քանի տարի և այն ընդունվեց այն հույսով, որ նոր անվանումը ավելի ճշգրիտ կարտացոլի հաստատության կրթական նկարագիրը:

Հասկանալով, որ EuNC-ին ծառայած երկրների միջավայրն արագորեն փոփոխվում է, դպրոցից պահանջվում էր կտրուկ վերանայել, թե ինչպես էր նա ծառայության համար տրամադրում աստվածաբանական կրթությունը և 2004 թվականի աշնանը քոլեջը սկսեց 7-ամյա ինքնափոփոխման ծրագիր: 2006թ. Հունվարին Հոգաբարձուների Խորհուրդն ընդունեց այս ծրագրից բխող՝ «Շարժվելով Առաջ» նոր ռազմավարությունը: Ռազմավարությունը վերահաստատեց EuNC-ի առաքելությունն ու տեսլականը և նախանշեց ապագայի կազմակերպչական առաջնահերթությունները լինելով «մեկ բազմամշակութային և բազմազգ դպրոց, մեկ կամպուսով և վարչական կենտրոնով և ուսուցման բազմաթիվ կենտրոններով Եվրոպայի և ԱՊՀ տարբեր երկրներում»: EuNC-ն իր նպատակն է դնում «ուսուցչական անձնակազմի և ուսանողների բարձր շարժունակությունը կամպուսի և տարբեր կրթական կենտրոնների միջև և փորձում է նրանց ծանոթացնել առկա և հեռավար կրթության լավագույն ասպեկտներին»:

Հետագա տարիներին EuNC-ին իրականացրեց «Շարժվելով Առաջ» ռազմավարությունը: Քոլեջը հարմարեցրեց իր ակադեմիական և վարչական կառույցները, որպեսզի ավելի լավ աջակցի բազմաթիվ կենտրոններով դպրոցին, որն ունի մեկ ընդհանուր պրոֆեսորադասախոսական և ուսանողական ցանց, որոնք ապրում և

սովորում են տարբեր երկրներում և մեկ ուսումնական ծրագիր՝ Եվրասիայի տարբեր մշակույթների շրջանակում համատեքստայնացման համար: 2007-2008 թվականներին գործարկվեց այդ արդյունքների վրա հիմնված համատեքստային նոր ուսումնական ծրագիր: Նույն թվականին Քոլեջն ընդունեց նաև Կրեդիտների Փոխանցման և Կուտակման Եվրոպական Համակարգը (ECTS):

Ռազմավարական պլանի ժամանակացույցի վերջին տարիներին (2010-11 թթ.), թեև բոլոր նպատակներն իրականացվել էին, Քոլեջը հայտնվեց այլ իրավիճակում, քան նախատեսված էր: EuNC-ն բախվեց անկանխատեսելի զարգացումների, ինչպիսիք են քոլեջում ուսանողների գրանցման զգալի անկումը, բոլոր ուսումնական կենտրոնների հավատարմագրման մարտահրավերները MNU-ի հետ գոյություն ունեցող փոխկապակցված հարաբերությունների և ֆինանսական և կադրային ռեսուրսների նվազման հետ: Ի պատասխան այս մարտահրավերների, EuNC-ն 2011 թվականի ամռանը որոշեց փակել առկա ծրագիրը և ամբողջությամբ կենտրոնանալ Քոլեջի Ուսումնական Կենտրոնների վրա: Կամպուսի գույքի վաճառքն ավարտվեց 2015թվականին: EuNC-ն լիովին դարձել է մեկ դպրոց շատ երկրներում, որտեղ կան Ուսումնական Կենտրոններ և ընդհանուր վարչակազմ, որը կատարում է Քոլեջի առաքելությունը: Այս շեշտադրմանը ի պատասխան մշակվել է «Տեսիլք 2020» ռազմավարական ծրագիրը:

Ի հավելումն այս փոփոխությունների, 2012թ. Նոյեմբերին EuNC-ն ստացավ իր նախնական հավատարմագրումը Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (ECTE) կողմից, Հոգևոր Ձևավորման Վկայականի (60 ECTS) և Քրիստոնեական Ծառայության Դիպլոմի (120 ECTS) ծրագրերի համար: Կիրառական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմի(180 ECTS) հավատարմագիրը, որը համեմատելի է աստվածաբանության մասնագիտական բակալավրի աստիճանի հետ, ստացվել է 2020 թվականի Ապրիլին: 2025 թվականի Սեպտեմբերին կայացած չորրորդ վերանայման ցիկլից հետո EuNC-ին շնորհվեց ինստիտուցիոնալ և ծրագրային վերահավատարմագրում, որը վավեր կլինի մինչև 2030 թվականը՝ Վկայականի, Դիպլոմի և Առաջադեմ Դիպլոմի համար: Այս վերանայումը հատկապես կարևոր էր, քանի որ այն առաջինն էր, որը անցկացվել էր ECTE-ի կողմից՝ որպես Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Գրանցամատյանում (EQAR) գրանցված որակի ապահովման

գործակալություն ճանաչման ներքո:

Նորագույն ռազմավարական «EuNC Strategic Plan – 2030 Growing Together» ծրագիրը, մշակվել է 2019 թվականին: Ե՛վ համաճարակը, և՛ աշխարհաքաղաքական հակամարտությունները հետաձգեցին, բայց ավելի ուժեղ նախաձեռնություններ առաջ տանելու համար նաև փոխեցին և ամրապնդեցին ծրագրի որոշ ուղղություններ: Այս ծրագիրն ընդունվել է 2023 թվականի Հունվարին EuNC-ի Հոգաբարձուների Խորհրդի կողմից:

# Է. ՃԱՆԱՉՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ, ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳՐՈՒՄ

**1. Ճանաչված է Կրթության Միջազգային Խորհրդի (IBOE) կողմից**
EuNC-ն Եվրասիական Կրթական Խորհրդի անդամ է և IBOE-ի կողմից ճանաչվում է որպես Նազովրեցու Եկեղեցու պաշտոնական կրթական հաստատություններից մեկը:

**2. Ուսումնական Ծրագրի Հաստատում**
Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի և Եվրասիական Տարածաշրջանային Ծառայության Զարգացման Ուղեցույցի (2025) համաձայն, ձեռնադրված ծառայության հաստատված Ուսումնական Ծրագրի նվազագույն ակադեմիական պահանջները կազմակերպված են չորս ուսումնական տարրերի շուրջ՝ Բովանդակություն, Իրավասություն, Բնավորություն և Համատեքստ: Ձեռնադրման հաստատված Ուսումնական Ծրագիրը պահանջում է 3600 Ուսանողական Ուսումնական Ժամեր:

Քրիստոնեական Ծառայության Դիպլոմը (DCM), որը բաղկացած է 120 ECTS-ից, որը համապատասխանում է 3600 Ուսանողական Ուսումնական Ժամի, հաստատվել է Միջազգային Ուսումնական Ծրագրի Խորհրդատվական Կոմիտեի (ICOSAC) կողմից, որպես Նազովրեցու Եկեղեցու շրջաններում ձեռնադրված ծառայության նվազագույն ակադեմիական պահանջները բավարարող մինիմում, որոնց համար EuNC-ն ծառայում է որպես՝ կրթական մատակարար:

Այդ շրջանները, հաշվի առնելով իրենց համատեքստային իրողությունները, կարող են պահանջել ակադեմիական պատրաստվածություն, որը ավելին է նվազագույն վավերացված Ուսումնական Ծրագրից: Այդպիսի պահանջները կարող են ներառել լրացուցիչ դասընթացներ կամ ավելի երկար ծրագրի ավարտ, ինչպիսին է

Կիրառական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմը: Ձեռնադրության թեկնածուները պատասխանատու են տվյալ Շրջանի կողմից սահմանված պահանջները բավարարելու, որտեղ որ նրանք ձգտում են ձեռնադրվել: Յուրաքանչյուր Ուսումնական Կենտրոնում և Շրջանում պահպանվող կոնկրետ Ուսումնական Ծրագրի և ձեռնադրության հետ կապված ակադեմիական պահանջների վերաբերյալ տեղեկությունների համար ուսանողները պետք է ծանոթանան «Ձեռնադրության պահանջներ» վերնագրով լրացուցիչ փաստաթղթին:

**3. Հավատարմագրված է Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (ECTE) կողմից:**

EuNC-ի արտաքին հավատարմագրումը հիմնված է դավանանքային ճանաչման և վավերացման համար ձեռնարկված աշխատանքի վրա, քանի որ այդ գործընթացը ցույց է տալիս իր ծրագրերի համահունչությունը, ուսումնական ժամերի կառուցվածքը, ակադեմիական մակարդակը և կրթական նպատակը՝ ճանաչված որակի ապահովման շրջանակներում:
EuNC-ին հավատարմագրված է ECTE-ի կողմից որպես Բարձրագույն Կրթության Այլընտրանքային Մատակարար, համապատասխան Բարձրագույն Կրթության Եվրոպական Չափանիշներին և Ուղեցույցներին (European Standards and Guidelines, (ESG)):

EuNC-ն ունի ECTE-ի կողմից հավատարմագրված երեք ծրագիր: Հոգևոր Զնավորման Վկայականը (60 ECTS, որը Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքում (QF-EHEA) համապատասխանում է Կարճ Ցիկլի Մասնակի Որակավորմանը և Եվրոպական Որակավորումների Շրջանակում (EQF) համապատասխանում է Մասնակի 5-րդ Մակարդակին): Քրիստոնեական Ծառայության Դիպլոմը (120 ECTS), համապատասխանում է QF-EHEA Կարճ Ցիկլին և EQF Մակարդակ 5-ին: Կիրառական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմը (180 ECTS), համապատասխանում է QF-EHEA Առաջին Ցիկլին և EQF Մակարդակ 6-ին:

## Ը. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

European Nazarene College-ը պաշտոնական համաձայնագրեր և անդամակցություններ ունի հետևյալ հաստատությունների և կազմակերպությունների հետ՝

Համաձայնագրեր

- Akademie für Weltmission, Korntal, Germany
- Nazarene Bible College, Colorado Springs, CO, United States of America
- Nazarene Theological College, Manchester, England, United Kingdom
- Northwest Nazarene University, Nampa, ID, United States of America
- One Mission Society, Greenwood, IN, United States of America
- Seminário Teológico Baptista, Queluz, Portugal
- The Salvation Army (Hungary, Spain)

Անդամակցություններ

- Methodist-related Theological Schools in Europe
- The International Association of Methodist Schools, Colleges, and Universities

# II.ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## Ա. ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### *1. Ընդունելության* Պահանջները

EuNC-ում ընդունվելու համար կրթական մուտքի մինիմալ պահանջը 18 տարեկանն է և ընդհանուր միջնակարգ կամ մասնագիտական կրթության ավարտը, որը հնարավորություն է տալիս մուտք գործել բարձրագույն կրթություն (ISCED մակարդակներ 3 կամ 4) կամ ստանալ այլ համարժեք որակավորում: Այս պահանջները համապատասխանում են EQF 5-րդ և 6-րդ մակարդակի ծրագրերին ընդունվելու համար անհրաժեշտ մակարդակին:

Յուրաքանչյուր Ուսումնական Կենտրոն ունի հատուկ ուղեցույց այն մասին, թե ինչպես են մեկնաբանվում վերը նշված ընդհանուր ընդունելության պահանջները՝ համաձայն իրենց երկրների կրթական համակարգի:

Որպես աստվածաբանության և ծառայության մասնագիտական Քոլեջ, EuNC-ն գիտակցում է անձնական հավատքի, բնավորության և կոչման զգացողության կարևորությունը հոգևոր ծառայողի պատրաստության մեջ, որոնք այն գործոններն են, որոնք հաշվի են առնվում ընդունելության գործընթացում՝ ընդունելության որոշումներ կայացնելիս:

Այն դիմորդները, ովքեր ցանկանում են հաճախել իրենց մայրենի լեզվից տարբերվող այլ լեզվով դասընթացների, պարտավոր են խորհրդակցել համապատասխան Ուսումնական Կենտրոնի համակարգողի հետ՝ ստուգելու համար, որ իրենց լեզվի իմացությունը բավարար է ծրագրի ակադեմիական պահանջները բավարարելու համար:

EuNC-ն ողջունում է այլ քրիստոնեական ավանդություններ ներկայացնող ուսանողներին, ովքեր հավատում են, որ կարող են օգուտ քաղել EuNC-ի կողմից տրամադրվող աստվածաբանական և ակադեմիական կրթությունից:

## 2. Հասանելիության Հավասարություն

EuNC-ն պարտավորվում է ապահովել իր կրթական ծրագրերին հավասար հասանելիություն և կիրառել ընդունելության թափանցիկ, արդար և հետևողական ընթացակարգեր: Մինչ ընդունելության չափանիշները շարունակում են համապատասխանել բարձրագույն կրթության ճանաչված պահանջներին և առաջարկվող ծրագրերի ակադեմիական սպասումներին, EuNC-ն ընդունում է, որ դիմորդները կարող են լինել բազմազան կրթական, մշակութային և անձնական ծագում ունեցող անձինք: Հետևաբար, EuNC-ն սահմանում է հատուկ հասանելիության դեպքերի համար սահմանված դրույթներ, այդ թվում՝ ստանդարտ կրթական որակավորում չունեցող դիմորդների և առողջապահական կամ ուսումնառության աջակցության կարիք ունեցողների համար: Այս դրույթները մշակված են, որպեսզի որակավորված թեկնածուները հնարավորություն ունենան ցուցադրելու իրենց ուսման պատրաստակամությունը՝ միաժամանակ պաշտպանելով ծրագրերի ակադեմիական ամբողջականությունը և ուսումնական արդյունքների հասնելը:

### 1) Հատուկ մուտքի տրամադրում

21 տարեկանից բարձր դիմորդները, ովքեր կամ չունեն միջնակարգ դպրոցի դիպլոմ (կամ համարժեք փաստաթուղթ), կամ չեն կարող ներկայացնել դիպլոմ ստանալու ապացույց, կարող են դիտարկվել ընդունելության համար՝ համաձայն ստորև նշված դրույթների:

Նման դիմորդները կընդունվեն որպես ժամանակավոր կուրսի ուսանողներ (տե՛ս II.Ա.3.2 բաժինը) փորձաշրջանով, որի ընթացքում նրանցից ակնկալվում է ցույց տալ իրենց ակադեմիական պատրաստվածությունը և կարողությունները՝ ծրագրի ուսումնական արդյունքներին հասնելու համար: Այս ժամանակահատվածում կիրառվում են հետևյալ պահանջները.

ա) Ուսանողը պետք է վերցնի և հաջողությամբ հանձնի ACP1000 EuNC Կողմնորոշման դասընթացը, ապա հետևյալ ներածական դասընթացներից երկուսը՝ ACP12 Ակադեմիական Հմտություններ 1, BIB11 Հին Կտակարանի Ներածություն, BIB12 Նոր Կտակարանի Ներածություն, MIS11 Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, MIS12 Կոչում և Անձնական Ծառայություն, MIS13 Հոգևոր Ձևավորում և THE11 Վարդապետության Ներածություն:

բ) Յանկացած ակադեմիական դժվարության կամ անհրաժեշտ ճշգրտումների հարցում ՈւԿ համակարգողը, ադմինիստրատորը կամ նշանակված դասախոսը կօգնեն ուսանողին:

գ) Երկու ներածական դասընթացների հաջող ավարտից հետո նրանց սովորական ուսանողի կարգավիճակի տեղափոխելու վերաբերյալ Գրանցողը պարբերաբար կվերանայի այս ուսանողների կարգավիճակը և կհաղորդակցվի Ուսումնական Կենտրոնի համակարգողի հետ: Եթե ուսանողը երեք դասընթացից ձախողվել է (ներառյալ դասընթացը կրկնելը), դեպքը պետք է գնահատվի Ուսումնական Կենտրոնի և Առաջնորդական Թիմի միջև՝ որոշելու համար, թե արդյոք ուսանողը կարող է շարունակել առաջադիմությունը, թե՞ կարող է դուրս մնալ ուսումից:

**2) Դիմորդներ, որոնք աջակցության կարիք ունեն Առողջապահական կամ Կրթական ոլորտում:**

Առողջապահական կամ կրթական աջակցության կարիք ունեցող դիմորդները կարող են դիտարկվել ընդունելության համար՝ համաձայն EuNC -ի հավասար հասանելիության պարտավորության: Նրանք պարտավոր են ներկայացնել համապատասխան փաստաթղթեր ընդունելության գործընթացի շրջանակներում: Ծրագրին մասնակցությունը աջակցելու համար կարող են տրամադրվել ողջամիտ ճշգրտումներ՝ հիմնվելով անհատական կարիքների և Ուսումնական Կենտրոնում առկա ռեսուրսների վրա: Նման ճշգրտումները կարող են ներառել, օրինակ, գնահատումների համար նախատեսված ժամանակի երկարաձգում, առաջադրանքների այլընտրանքային ձևաչափեր կամ օժանդակ տեխնոլոգիաների օգտագործում՝ պայմանով, որ ծրագրի ուսումնական արդյունքները պահպանվեն:

### *3. Ընդունելության Տարբերակները*

Դիմորդները կարող են ընդունվել որպես EuNC-ի ուսանողներ տարբեր կարգավիճակներով: Ընդունելության կոնկրետ գործընթացին կարելի է ծանոթանալ EuNC-ի կայքում:

**1) Ծրագրի դիմորդներ**
Սրանք այն դիմորդներն են, ովքեր մտադիր են շարունակել EuNC-ի ծրագրերից մեկը:

**2) Մեկանգամյա կամ ժամանակ առ ժամանակ կրկնվող**

**դասընթացների (նախկինում առանց դիպլոմային աստիճան ստանալու կարգավիճակ) դիմորդներ:**
Սրանք այն դիմորդներն են, ովքեր ցանկանում են ընդունվել որպես EuNC-ի ուսանողներ, բայց չեն ցանկանում մասնակցել որևէ կոնկրետ ծրագրի և պարզապես մասնակցում են անհատական հավատարմագրված դասընթացների, քանի դեռ նրանց դասընթացի նախապայմանները բավարարված են:

Ուսանողները կարող են մասնակցել այնքան մեկանգամյա մասնագիտական դասընթացների, որքան ցանկանում են, սակայն, եթե նրանք ցանկանում են ստանալ վկայական/դիպլոմ, նրանք պետք է պաշտոնապես դիմեն որևէ ծրագրի: Մեկանգամյա դասընթացներ անցնող ուսանողները պետք է նկատի ունենան, որ ուսումնական ծրագրերի հետ կապված իրենց առաջընթացի հետազծում չկա, և եթե նրանք ինչ-որ պահի ցանկանում են ավարտել, ապա նրանք պետք է ենթարկվեն յուրաքանչյուր տարվա  Ուղեցույցի և ուսումնական պլանի փոփոխություններին: Հետևաբար, եթե մտադիր եք այն ավարտին հասցնել մտադրության հայտնի դառնալու պահից, խստորեն խորհուրդ է տրվում հայտարարել ընտրված ծրագրի մասին: Ծրագրում ընդունվելուց հետո ուսանողները պետք է տեղյակ լինեն ուսման տևողության և ուսումնական ծանրաբեռնվածության ակնկալիքների մասին (տես II. Ա.8. և Գ.1.):

### *4. Ուսանողի Պատասխանատվությունը*

Որպեսզի ուսուցումը տեղի ունենա քոլեջի համատեքստում, կա գործընկերություն, որը պետք է տեղի ունենա ուսանողի և հաստատության միջև: Հաստատությունը գործադրում է բոլոր ջանքերը առաջարկելու որակյալ դասընթացներ, որոնք անհրաժեշտ են ուսանողին և բավարարում են նրա ուսման կարիքները՝ իր ծրագիրը ողջամիտ ժամկետներում ավարտելու համար: Այնուհետև կարևոր է, որ ուսանողը իր ժամանակացույցում բավարար ժամանակ հատկացնի՝ դասընթացներին մասնակցելու համար, որպեսզի կարողանա յուրացնել ուսումնական նյութը և ավարտին հասցնել անհրաժեշտ ուսումնական գործողությունները: Թեև ուսանողի առաջընթացը կանոնավոր կերպով ստուգվում է ՈւԿ-ի համակարգողի և EuNC-ի Գրանցողի կողմից կարևոր է նաև, որ ուսանողը իր առաջընթացի համար տեղյակ լինի իր առաջադիմության մասին  և տեսնի, թե կա՞ն արդյոք որևէ դժվարություններ, որոնք նա նախատեսում է համապատասխան ծրագիրն ավարտելիս:

*5. Օգտագործվող Ուղեցույցը և Դասացուցակը*

Ակադեմիական ծրագրի պահանջներից բացի, բոլոր ուսանողների համար կիրառվում են ակադեմիական և ոչ ակադեմիական կանոնակարգեր, որոնք կա՛մ հրապարակվում են Ակադեմիական Ուղեցույցում, կա՛մ հաղորդվում են հաստատության պաշտոնական ուղիներով:

Ուսանողները սովորաբար ավարտում են իրենց սկզբնական գրանցման պահին գործող ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան: Արտաքին հավատարմագրման կամ կարգավորող մարմինների կողմից պահանջվող ծրագրային փոփոխությունները կիրառվում են պաշտոնապես հաստատվելուց հետո: EuNC-ի որակի ապահովման գործընթացների շրջանակներում ուսումնական պլանում կատարված փոփոխությունները կարող են ներառել դասընթացների փոխարինումներ կամ այլ ճշգրտումներ՝ ապահովելու համար, որ ուսանողները կարողանան ավարտել իրենց ծրագիրն առանց որևէ բացասական հետևանքների:

Ուսանողները կարող են նաև դիմել նոր ուսումնական ծրագրով սովորելու համար: Նման դիմումները պետք է համաձայնեցվեն ուսումնական հաստատության համակարգողի հետ և հաստատվեն սահմանված ընթացակարգի համաձայն: Այս տարբերակը ընտրող ուսանողները պետք է համապատասխանեն նոր ընդունված ուսումնական ծրագրի բոլոր պահանջներին:

Ուսումնական ծրագրի կիրառելիությունը անսահմանափակ չէ: Այն որոշվում է ինչպես ուսանողների ուսումնառության տևողությամբ, այնպես էլ ուսումնական ծրագրի կյանքի ցիկլով, որը պարբերաբար վերանայվում է: Սովորաբար, ուսումնական պլանը ուժի մեջ է մնում մինչև 10 տարի: Այս ժամանակահատվածից հետո այն վերանայվում է և կարող է չեղարկվել: Այս ժամանակահատվածում կրթությունը չավարտած ուսանողները սովորաբար անցնում են ուսումնական պլանի ամենավերջին տարբերակին: Ակադեմիական անբարենպաստությունից խուսափելու համար անցումը հիմնված է հստակ սահմանված համարժեքությունների վրա և ուսանողները ստանում են պաշտոնական տեղեկատվություն և անհատական աջակցություն ողջ գործընթացի ընթացքում: Անհրաժեշտության դեպքում, ուսանողներին կարող է շնորհվել ավելի ցածր որակավորման մակարդակ՝ իրենց բավարարած պահանջների համար, նախքան նրանք

կկարողանան շարունակել իրենց կրթությունը թարմացված ուսումնական ծրագրով:

Ծրագրի դադարեցման դեպքում ուսանողները պաշտոնապես կտեղեկացվեն որոշում կայացնելուց հետո: Քոլեջը կմշակի ավարտական ծրագիր, որը հաշվի կառնի յուրաքանչյուր ուսանողի ակադեմիական առաջադիմությունը և մնացած բոլոր կարիքները: Որպես կանոն, ավարտական ծրագիրը նախատեսված է ավարտել հաջորդ հավատարմագրման ցիկլի ընթացքում, անհրաժեշտության դեպքում զնահատելով անհատական դեպքերը:

Եթե ուսանողը երեք տարուց ավելի դուրս է մնացել EuNC-ից, նա կվերադառնա այն ուսումնական ծրագրին, որը գործում էր վերազրանցման պահին: Նախկինում ավարտված դասընթացների ճանաչումն ապահովելու և ուսանողի ակադեմիական իրավունքների որևէ խախտում կանխելու համար Քոլեջը կարող է սահմանել համապատասխան համարժեքներ:

### *6. Ուսումնական Տարվա Սահմանումը*

EuNC-ում պաշտոնական ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերին և ավարտվում հաջորդ օրացուցային տարվա օգոստոսին:

### **7. Արտաքին Ուսուցման Արդյունքների Ճանաչում**

Դիմորդներն ու ուսանողները կարող են իրենց հայեցողությամբ դիմել EuNC-ի ծրագրից դուրս ավարտած ուսման ճանաչման համար: Այդ ուսուցումը կարող է լինել ֆորմալ (առաջարկվում է այլ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից), ոչ ֆորմալ (օրինակ՝ առաջարկվող հաստատությունների կողմից, որոնք հավատարմագրված չեն), կամ ինֆորմալ (օրինակ՝ պրակտիկայի վրա հիմնված ուսուցում): Թեև նման խնդրանքները կարող են ներկայացվել ընդունելությունից հետո, ուսումնական պլանավորման և ծրագրի առաջընթացն արդյունավետ ապահովելու համար դիմորդներին խրախուսվում է ուսման ճանաչումը փնտրել ընդունելության գործընթացի սկզբում:

Մանրամասների համար խնդրում ենք տեսնել « EuNC-ի կողմից Արտաքին Ուսուցման Ճանաչում» վերնագրով փաստաթուղթը:

*8. Կրթության Տևողությունը*

Ուսումնական ծրագրերը որպես կանոն, ավարտվում են գնահատված ժամկետներում, որոնք համապատասխանում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար առաջարկվող 20 ECTS կրեդիտի ուսուցման տեմպին: Սա թույլ կտա, որ Վկայականի ծրագիրը ավարտվի երեք տարում, Դիպլոմային ծրագիրը՝ վեց տարում, իսկ Առաջադեմ Դիպլոմը՝ ինը տարում: Այս ժամկետները ապահովում են ծրագրի արդյունավետ առաջընթացը՝ միաժամանակ թույլ տալով ճկունություն՝ հաշվի առնելով հեռավար ուսուցման ուսանողների մեծ մասի կարիքները, ինչպես նաև նրանց անձնական և հոգևոր հանգամանքները:

*9. Հեռացում EuNC-ից*

Ուսանողները ցանկացած պահի կարող են դուրս գալ EuNC-ից լրացնելով համապատասխան ձևաթուղթը: Նրանց համար, ովքեր երկու ուսումնական տարվա ընթացքում չեն ընդգրկվել որևէ դասընթացի, քոլեջը իրավունք ունի ինքնաբերաբար հեռացնել նրանց:

# Դ. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

EuNC-ի դասընթացին մասնակցելու համար, ուսանողը պետք է պաշտոնապես գրանցված լինել այդ դասընթացին:

Ակադեմիական կարգավիճակի ցանկացած փոփոխության դեպքում ուսանողներին անհրաժեշտ է շփվել իրենց Ուսումնական Կենտրոնի Համակարգողի/Ադմինիստրատորի հետ, ով ուսանողի հետ միասին կպատրաստի համապատասխան ձևաթուղթը Գրանցողին ներկայացնելու համար:

*1. Դասալսումներ Կամ Աուդիտ*

Աուդիտը գրանցման կարգավիճակ է, որը թույլ է տալիս ուսանողներին հաճախել դասի առանց կրեդիտ ստանալու և առանց այս դասընթացի հաշվի առնելու ուսումնական ծրագրի պահանջներում: Դասախոսի ուղղորդմամբ դասալսող ուսանողները կարող են ներկա գտնվել դասախոսություններին, գրառումներ կատարել և մասնակցել դասարանային քննարկումներին առանց որևէ այլ ուսումնական

գործունեություն ներկայացնելու:

Գործնական պարապմունքները (MIN11 Պրակտիկա, MIN26 Ինտերնշիպ, MIN291 Կյանքի և Ծառայության Վերաբերյալ Աստվածաբանական Խորհրդածություն) և ավարտական դասընթացները (MIN27 Ծառայության ինտեգրացիա, MIN30 Վերջնական Վերանայում) չեն կարող աուդիտի ենթարկվել:

Աուդիտի կարգով դասընթացին ընդունված ուսանողները կարող են դիմել կանոնավոր ընդունելության կամ հակառակը՝ միայն դասընթացի ամբողջ տևողության առաջին 25%-ի ընթացքում, և նրանցից կգանձվի ուսման վարձը՝ համաձայն նոր կարգավիճակի:

Եթե մասնակցության պահանջը բավարարված է, գնահատականների հաշվետվության և տեղեկանքի ցուցանակի վրա կգրվի «AU» (աուդիտն ավարտված է), հակառակ դեպքում՝ «AI» (աուդիտն անավարտ է):

### *2. Դասընթացից Հրաժարվելը*

Ուսանողները կարող են հրաաժարվել դասընթացից այն պայմանով, որ նրանք դա պահանջեն դասընթացի ամբողջ տևողության առաջին 10%-ի ընթացքում: Բաց թողնված դասընթացը չի ցուցադրվի գնահատականի հաշվետվության կամ ակադեմիական արձանագրության վրա:

### *3. Դասընթացից Դուրս Գալը*

Ուսանողները կարող են դուրս գալ դասընթացից այն պայմանով, որ նրանք դա պահանջեն դրա ամբողջ տևողության առաջին 50%-ի ընթացքում՝ հաշված դասընթացի պաշտոնական մեկնարկի ամսաթվից, ինչպես նշված է ուսումնական պլանում: «W» տառը կհայտնվի գնահատականի հաշվետվության և ակադեմիական արձանագրության վրա:

Դասընթացից դուրս եկած ուսանողներին ուսման վարձի մի մասը կարող է փոխհատուցվել համաձայն Ֆինանսներ բաժնի (III.) կետի ժամանակացույցի:

### *4. Դասընթացը Կրկնելու Հնարավորություն*

Եթե ուսանողը ցանկանում է դասընթացը կրկին անցնել և կրկնվող դասընթացի գնահատականը փոխարինել նախորդով, ապա նա կարող է Ուսումնական Կենտրոնի Համակարգողի միջոցով դիմել Գրանցողին:

Միայն կրկնվող գնահատականը կհաշվարկվի կուտակային միջին միավորի մեջ:

# Գ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՅԱՆՔ

## *1. Ակադեմիական Ծանրաբեռնվածություն*

Ընդհանուր առմամբ, EuNC-ի ուսանողները հեռակա ծրագրի ուսանողներ են: Ուսանողի տարեկան ակադեմիական ծանրաբեռնվածությունը տատանվում է և կախված է Ուսումնական Կենտրոնների կողմից առաջարկվող և/կամ ուսանողների կողմից վերցված դասընթացների քանակից: Ծրագրերից մեկում ընդգրկված ուսանողների համար տարեկան ծանրաբեռնվածությունը սովորաբար պետք է լինի 20 և 30 ECTS-ի միջև:

Եթե ուսանողը որոշում է չընտրել առաջարկվող դասընթացը, կարող է մի քանի տարի անցնել, մինչև դասընթացը կրկին առաջարկվի, ինչը կազդի ուսանողի ուսումնառության տևողության վրա:

## *2. Ակադեմիական Արձակուրդ*

Ծրագրի ուսանողին կարող է տրամադրվել 12 ամսվա արձակուրդ՝ ուսանողի կողմից «Կատարել Փոփոխություն Ուսանողի Գրանցամատյանում » ձևաթղթի միջոցով ներկայացված դիմումի համաձայն: Եթե ուսանողին խոչընդոտում են հարցումը ներկայացնելու հարցում, ապա ՈւԿ-ի Համակարգողը կարող է ներկայացնել ձևաթուղթը բացատրելով, թե ի՞նչ է արվել, ինչու՞ է կայացվել այս որոշումը և հետևել համապատասխան ընթացակարգին: Անհրաժեշտ է նշել արձակուրդի պատճառը:

Երբ արձակուրդի ժամկետը լրանա, Գրանցողը կտեղեկացնի ՈւԿ-ի Համակարգողին/Ադմինիստրատորին, որը կհետևի ուսանողին՝ իմանալու, թե արդյոք արձակուրդի պատճառները լուծված են:

Կախված այդ խորհրդակցության արդյունքից և ՈւԿ Համակարգողի/Ադմինիստրատորի կողմից Գրանցողին տրամադրված հետագա տեղեկատվությունից ուսանողը՝ ա) կրկին կսկսի մասնակցել դասերին, բ) կարող է ստանալ բացակայության երկարաձգում՝ պատշաճ

հիմնավորմամբ և նոր Ձևաթուղթ ներկայացնելով: Մեկից ավելի երկարացումները պետք է հաստատվեն Առաջնորդական Թիմի կողմից:

Եթե ուսանողի ուսումը վերսկսելու ողջամիտ հեռանկար չկա, կամ եթե ուսանողը շարունակում է անտարբեր մնալ՝ չնայած կապ հաստատելու ողջամիտ փորձերին, ուսանողը կարող է վարչական կարգով հեռացվել քոլեջից:

### *3.Ակադեմիական Ազնվություն*

EuNC-ում ակադեմիական ազնվությունը մեր ուսումնական համայնքի վարքագծային սպասումների մաս է կազմում, այդ իսկ պատճառով այն ներառված է նաև Վարքագծի Կանոնագրքում:

Որպես Քրիստոնեական Կյանքի արտահայտություն, ակադեմիական բոլոր ձգտումներում ազնվությունը կենսական նշանակություն ունի: Պահանջվում է, որ EuNC-ի ուսանողները չմասնակցեն կամ չօգնեն ուրիշներին խաբեության, գրագողության մեջ (օգտագործելով ուրիշի խոսքերն ու գաղափարները՝ առանց սկզբնաղբյուրը նշելու), ինքնագրագողություն (վերօգտագործում աշխատանք, որն ուսանողն արդեն ներկայացրել է մեկ այլ դասի), կեղծիք կամ ակադեմիական անազնվության այլ ձևեր (օրինակ՝ աշխատանք խմբերով, երբ անհատական աշխատանք է պահանջվում, օգտագործելով արհեստական բանականության(ԱԲ), գործիքներ կամ ավտոմատացված համակարգեր՝ զգալի մասեր կամ ամբողջական աշխատանք ստեղծելու համար, որոնք ներկայացվում են որպես բնօրինակ աշխատանք՝ առանց համապատասխան հեղինակային վերագրման կամ ճանաչման):

Ուսանողի պարտականությունն է սովորել իրենց օգտագործած աղբյուրները վկայակոչելու համապատասխան մեթոդները: Ակադեմիական աշխատանքներ գրելու և ներկայացնելու ուղեցույցները ներկայացված են “ ACP1000, EuNC Կրթական Ծրագրի Ներածություն” առարկայում:

Ակադեմիական անազնվությունը ակադեմիական ազնվության լուրջ էթիկական խախտում է: Ակադեմիական անազնվության համար **նվազագույն պատիժը** կլինի առաջադրանքի ձախողումը: Ուսուցչի և ՈւԿ-ի կոմիտեի հայեցողությամբ կարող են կիրառվել ավելի խիստ միջոցներ, ներառյալ դասընթացի ձախողումը, ակադեմիական փորձաշրջանը կամ ակադեմիական հեռացումը:

*4. Մտավոր Սեփականություն*

Ուսուցիչների կողմից ստեղծված բոլոր ուսումնական պլանները EuNC-ի սեփականությունն են: Մյուս հաստատությունները կարող են օգտագործել դասընթացների նյութերն ու բաղադրիչները EuNC-ի Ռեկտորից թույլտվություն ստանալուց հետո և ճանաչելով EuNC-ին որպես այդ ռեսուրսների աղբյուր:

*5. Լեզվի Հմտություններ և Ակադեմիական ոճ*

Որպես ընդհանուր կանոն, բոլոր գրավոր առաջադրանքների գնահատականի 10%-ը հիմնված է լեզվի օգտագործման վրա, քերականության և ուղղագրության իմացության, ինչպես նաև հստակ հաղորդակցվելու կարողության:

Ակնկալվում է, որ գրավոր առաջադրանքները կատարելիս ուսանողները կհետևեն իրենց Ուսումնական Կենտրոնի որդեգրած ակադեմիական ոճին:

*6. Դասերի Հաճախումը*

EuNC-ում կրթությունն ավելին է, քան պարզապես փաստեր սովորելը, այլ այն նաև ներառում է բնավորության ձևավորում, Քրիստոսի հետ քայլելու խորացում և կյանքի և ծառայության հմտությունների ձևավորում: Այս նպատակներին հասնելու համար ուսանողներից ակնկալվում է ակտիվ մասնակցություն իրենց դասերին: Մասնակցությունը, որպես պարտադիր ուսումնական գործունեություն EuNC-ի բոլոր դասընթացներում, սովորաբար պետք է կազմի դասընթացի ընդհանուր ուսումնական ժամերի ոչ պակաս, քան 10%-ը: Բացառությունները (օրինակ՝ Ուղղորդված Ուսումնասիրության ձևաչափերը) պետք է հստակորեն հիմնավորված լինեն ուսումնական ծրագրում:

Ներդասարանային դասընթացների կամ տեսակոնֆերանսներից օգտվողների համար, սա նշանակում է և՛ ներկա լինել այդ նիստերին, և՛ ակտիվորեն մասնակցել քննարկումներին: Առցանց դասերի համար սա նշանակում է շաբաթվա ընթացքում կանոնավոր կերպով միանալ դասընթացին և հետևել մշակված ֆորումներին և առաջադրանքներին:

Եթե ուսանողը չի կարողանում մասնակցել դասընթացին կամ միանալ իր դասընթացի առցանց բաղադրիչին, նա պետք է հնարավորինս շուտ

տեղեկացնի ուսուցչին և բացատրի պատճառը (հիվանդություն կամ այլ անխուսափելի հանգամանքներ) և համապատասխանաբար կատարի աշխատանքը:

Մասնակցության պահանջները չկատարելը կարող է հանգեցնել գնահատականների տույժերի կամ այլ հետևանքների, ինչպես նշված է ուսուցչի կողմից, և կարող է լինել նույնքան խիստ, որքան դասը չհանձնելը:

Հավաքագրման նպատակով ուսուցչի և ՈւԿ-ի Համակարգողի համաձայնությամբ, հնարավոր ուսանողներին կարող է թույլատրվել ներկա գտնվել մեկ պարապմունքի կամ ներկա լինել դասի տեսակոնֆերանսի նիստին:

## *7. Առաջադրանքների Ուշացումը*

Դասընթացի բոլոր առաջադրանքները պետք է հանձնվեն ուսուցչին մինչև սահմանված ժամկետը և ժամը: Եթե ուսանողը հիմնավոր պատճառներով դիմում է ուսուցչին մինչև ժամկետը, ուսուցիչը կարող է երկարաձգել և սահմանել նոր ժամկետ: Սկզբնական կամ պայմանավորված  ժամկետից հետո ներկայացված աշխատանքների համար (եթե տրամադրվել է), հնարավոր գնահատականի 10%-ը կհանվի առաջադրանքն ուշանալու յուրաքանչյուր օրվա համար: Վերջնական ժամկետից և ժամից հետո առաջադրանքները ոչ մի դեպքում չեն ընդունվի: Ֆորումները կարող են ունենալ ուշացման այլ քաղաքականություն, ինչպես նկարագրված է ուսումնական պլանում:

## ***8.* Հետաձգված Վերջնական Գնահատական (Նախկինում Անավարտ Գնահատական)**

Ուսանողները կարող են խնդրել երկարաձգում դասընթացի ավարտի օրվանից հետո՝ իրենց ակադեմիական աշխատանքն ավարտելու համար, եթե կան բացառիկ հանգամանքներ, որոնք թույլ չեն տալիս աշխատանքը ներկայացնել այդ ամսաթվին: Երկարաձգված վերջնաժամկետը որոշվում է ուսուցչի և ՈւԿ-ի Համակարգողի հետ խորհրդակցելով, առավելագույնը երեք ամիս՝ դասի ավարտի սկզբնական ամսաթվից սկսած և ոչ ավելի, քան մեկ ամիս՝ ուսումնական տարվա ավարտից հետո:

*9. Բացառիկ Հանգամանքների Համար Նախատեսված Դրույթներ*

Բացառիկ հանգամանքների դեպքերում, որոնք էապես ազդում են ուսանողի ակադեմիական աշխատանքն ավարտելու կամ դասի անցկացման վրա, ինչպիսիք են բնական աղետները, պատերազմը կամ այլ խաթարող իրադարձություններ, քոլեջը կարող է կիրառել ժամանակավոր արտակարգ իրավիճակների դրույթներ:

Նման դրույթները կարող են ներառել վերջնաժամկետների, գնահատման մեթոդների կամ դասացուցակների ճշգրտումներ՝ խորհրդակցելով Ուսումնական Կենտրոնի ղեկավարության հետ՝ պայմանով, որ պահպանվեն ակադեմիական չափանիշները: Բոլոր միջոցառումները կլինեն պաշտոնապես սահմանված, ժամանակային սահմանափակումներով և կենթարկվեն ինստիտուցիոնալ վերահսկողության:

***10. Դասընթացի Գնահատումը***

Յուրաքանչյուր դասընթացի վերջում ուսանողներին խստորեն խրախուսվում է ավարտել դասընթացի գնահատումը: Ուսանողների համախառն գնահատականները, ուսուցիչների գնահատումը, ինչպես նաև դասընթացի տվյալները կարող են օգտագործվել EuNC-ի դասախոսական կազմի, ՈւԿ-ի Ադմինիստրացիայի և/կամ ընդհանուր ղեկավարության կողմից որակի ապահովման տարբեր ասպեկտներում և Քոլեջի շարունակական գնահատման համար:

***11. Դասընթացների Դասավանդման Մեթոդները***

EUNC-ը հաստատում է, որ Ուսումնական Կենտրոնների համար հասանելի մատուցման եղանակները ծառայում են տարբեր մանկավարժական, համատեքստային և կրթական նպատակների: Մատուցման եղանակի ընտրությունը կատարվում է ուսումնական համայնքի կոնկրետ պահանջների հիման վրա՝ այլ ոչ թե կանխադրված կամ հարմարության հիման վրա՝ ընտրելով այն մեթոդը, որը լավագույնս է ծառայում ուսումնական արդյունքներին, համայնքի ձևավորմանը, մատչելիությանը և ակադեմիական ուսուցման ինտեգրմանը ծառայողական պրակտիկայի հետ:

1) **Ներդասարանային դասընթացներ**: Սրանք դասընթացներ են, որոնք առաջարկվում են Ուսումնական Կենտրոնի (ՈւԿ) կողմից, որը բաղկացած է մի շարք դասերից, որոշակի ՈւԿ-ի ուսուցման

վայրում, ուսուցչի և այդ վայրում ներկա բոլոր ուսանողների հետ: Սովորաբար այս դասընթացների դասաժամերը անցկացվում են 4-ից 14 օր ինտենսիվ ժամանակահատվածում, դասից առաջ և հետո դասընթացի առաջադրանքներով կամ կանոնավոր ընդմիջումներով ձգվելով ավելի երկար ժամանակահատվածով: Դասարանում դասավանդվող դասընթացը պլանավորելիս, ուսուցիչները և ՈւԿ-ը պետք է պլանավորեն այնպես, որ դասընթացի տևողությունը չգերազանցի օրական առավելագույն 6 ժամը:

2) **Առցանց դասընթացներ:** Սա դասընթաց է, որն իրականացվում է համացանցի միջոցով՝ առանց որևէ առկա դասի և կոնկրետ վայրի:

3) **Դասընթացներ, որոնք օգտագործում են տեսակոնֆերանսներ:** Տեսակոնֆերանսի դասընթացներում դասերը տեղի են ունենում, երբ ուսուցիչը և ուսանողները գտնվում են մեկ կամ մի քանի վայրերում, օգտագործելով որակյալ, համաժամանակյա ձայնային և տեսանկարահանող սարքավորումներ: Այս առաքման մեթոդով դասավանդվող դասընթաց պլանավորելիս ուսուցիչները և ՈւԿ-ը պետք է պլանավորեն այնպես, որ  դասընթացի տևողությունը չգերազանցի օրական առավելագույն 6 ժամը: Այս դասընթացները կարող են ունենալ առցանց բաղադրիչ ուղղորդելու և օգնելու ուսանողներին կատարել իրենց նախադասարանային և հետդասարանային առաջադրանքները:

4) **Հիբրիդային դասընթացներ:** Այս դասընթացները կարող են օգտագործել վերը նշված մեթոդներից որևէ մեկը`  հատուկ պարապմունքներ մատուցելու համար (առցանց բաղադրիչներ, դասարանային և տեսաժողովների պարապմունքներ):

5) **Ուղղորդված դասընթաց:** Ուղղորդված դասընթացը անհատականացված դասընթաց է, որն առաջարկվում է մեկ ուսանողի՝ դասախոսի հսկողության ներքո և ներառում է էական անկախ ուսումնասիրություն: Այս մեթոդը կիրառվում է, երբ դասընթացը չի կարող առաջարկվել քոլեջի սովորական մեթոդներով՝ ուսանողների սահմանափակ թվի պատճառով: Թեև դասախոսը կարող է պարբերաբար հանդիպումներ, հետադարձ կապ կամ ուսուցողական աջակցություն տրամադրել, դասընթացը չի ներառում կրկնվող սինխրոն դասախոսություններ կամ

կրկնվող կառուցվածքային ասինխրոն ուսուցման գործունեություն (օրինակ՝ ֆորումներ): Նման տարրեր ներառող դասընթացները սովորաբար ընկնում են վերը նշված ուսուցման եղանակներից մեկի տակ:

6) **Պրակտիկա:** Առաքման այս եղանակը ուսանողներին տալիս է իրական աշխատանքային փորձ՝ օգնելու նրանց ուսմանը և բարելավելու իրենց ծառայության հմտությունները: Ծառայության մեջ ներգրավվածությունը ներառված է ուսումնական ծրագրում, որպեսզի ուսանողներին հնարավորություն ընձեռվի գործնականում զգալ տեսական մասը:

EuNC-ի բոլոր դասընթացների տևողությունը պետք է պլանավորվի այնպես, որ դասընթացի համար ուսանողների միջինը շաբաթական ծանրաբեռնվածություն լինի 12-15 ժամ, ներառյալ իրական ժամանակով ընթացող բոլոր դասերը:

## 12. Ուսուցման Ավարտի Վկայական

Ավարտական գրանցման յուրաքանչյուր թեկնածու պատասխանատու է ավարտական գրանցման բոլոր պահանջները բավարարելու համար: Ռեկտորը հաստատում է, որ անցած դասընթացները համապատասխանում են ծրագրի պահանջներին: Գրանցողը ստուգում է, թե արդյոք թեկնածուները համապատասխանում են հետևյալ պահանջներին.

1) Կատալոգում թվարկված բոլոր ծրագրային պահանջները պետք է կատարվեն ավարտական արարողությունից ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:
2) Բոլոր ֆինանսական պարտավորությունները պետք է կատարվեն:
3) Յուրաքանչյուր ապագա շրջանավարտ պետք է ստանա ծրագրի կենտրոնի համակարգողի և ռեկտորի թույլտվությունը:

Մինչև վերը նշված չափանիշները չբավարարվեն, վկայական կամ դիպլոմ չի տրամադրվի: Ուսանողները EuNC-ի յուրաքանչյուր ծրագիրն ավարտելուց հետո իրավունք ունեն ստանալ մեկ պաշտոնական ակադեմիական արձանագրություն:

### *13. Ակադեմիական Արձանագրություն*

Լրացուցիչ ակադեմիական արձանագրության համար գանձվում է €7 վճար: Սակայն այն կտրամադրվի միայն բոլոր ֆինանսական պարտավորությունները կատարելուց հետո:

# Գ. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

### *1. Գնահատման Համակարգը*

Ուսանողի առաջադիմությունը գնահատվում է ստորև նշված համակարգի համաձայն՝ թե՛ անհատական առաջադրանքների, թե՛ վերջնական գնահատականի համար:

| Գնահատա-կանը (%) | Գնահա-տականը (տառերով) | Գնահատման միավորը | Բացատրություն |
|---|---|---|---|
| 97-100% | A+ | 4.0 | ԳԵՐԱԶԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔ: Ուսանողի աշխատանքը համապատասխանում է առաջադրանքի ակնկալիքներին՝ նյութին գերազանց տիրապետելով և առանց թերությունների: |
| 93-96%<br>90-92% | A<br>A- | 4.0<br>3.7 | ՇԱՏ ԼԱՎ ԱՇԽԱՏԱՆՔ: Ուսանողի աշխատանքը մանրակրկիտ կերպով համապատասխանում է առաջադրանքի սպասումներին: |
| 87-89%<br>83-86%<br>80-82% | B+<br>B<br>B- | 3.3<br>3.0<br>2.7 | ԼԱՎ ԱՇԽԱՏԱՆՔ: Ուսանողի աշխատանքը բավարարում է առաջադրանքի ակնկալիքները, նյութին լավ տիրապետելով և աննշան թերություններով: |
| 77-79%<br>73-76%<br>70-72% | C+<br>C<br>C- | 2.3<br>2.0<br>1.7 | ԲԱՎԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ: Ուսանողի աշխատանքը բավարարում է առաջադրանքի սպասելիքները, բայց ունի որոշակի ակնհայտ թույլ կողմեր: |

| | | | |
|---|---|---|---|
| 67-69%<br>63-66%<br>60-62% | D+<br>D<br>D- | 1.3<br>1.0<br>0.7 | ՎԱՏ ԱՇԽԱՏԱՆՔ:<br>Ուսանողի աշխատանքը բավարարում է առաջադրանքի նվազագույն ակնկալիքները, սակայն ունի զգալի թերություններ: |
| 0-59% | F | 0.0 | ԱՆԲԱՎԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ<br>Ուսանողի աշխատանքի թերությունները չեն արդարացնում անցողիկ գնահատականը: |

Հանձնված-չանցած դասընթացների համար՝<br>
Հանձնված S 0.0 Բավարար:<br>
Չանցած U 0.0 Անբավարար:

Ուսանողի միջին գնահատականը (GPA) որոշվում է կիսամյակի ընթացքում վաստակած գնահատականների ընդհանուր քանակը բաժանելով այդ կիսամյակում փորձված ECTS-ների ընդհանուր քանակին:

Վերջնական «F» կամ «U» գնահատականը նշանակում է անբավարար գնահատական և միավոր ստանալու համար անհրաժեշտ է դասընթացը հաջողությամբ վերահանձնել:

## 2. Գերազանցության Դիպլոմ

EuNC-ին Քրիստոնեական Ծառայության Դիպլոմի (DCM) և Գործնական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմի (ADAT) ծրագրերում կիրառում է հետևյալ ավարտական գերազանցությունները՝ գնահատելով իր շրջանավարտների բացառիկ ակադեմիական աշխատանքը:

| | | |
|---|---|---|
| Summa Cum Laude | Միջին Գնահատականի Միավորը՝ | 3.90 – 4.00 |
| Magna Cum Laude | Միջին Գնահատականի Միավորը՝ | 3.70 – 3.89 |
| Cum Laude | Միջին Գնահատականի Միավորը՝ | 3.50 – 3.69 |

# Ե. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Հետևյալ ընթացակարգը ուսանողներին հնարավորություն է տալիս բողոքարկել իրենց ակադեմիական աշխատանքին կամ վարչական հարցերին վերաբերող որոշումները։

1. **Ոչ պաշտոնական լուծում:** Անհրաժեշտության դեպքում ուսանողը նախ պետք է քննարկի խնդիրը անմիջականորեն ներգրավված անձի հետ (օրինակ՝ դասախոս, վարչական աշխատող)՝ հույս ունենալով, որ այս քննարկումը կարող է հանգեցնել բավարար լուծման։
2. **Ուսումնական Կենտրոնի վերանայում:** Եթե սկզբնական քննարկումը չի ապահովում փոխադարձաբար բավարար լուծում, կամ եթե խնդիրը չի կարող ուղղակիորեն լուծվել անձի կողմից՝ ավելի լայն խնդիրների, լեզվական սահմանափակումների, զգայունության և այլի պատճառով, ուսանողը պետք է խնդրի վերաբերյալ կապ հաստատի Ուսումնական Կենտրոնի Համակարգողի/Ադմինիստրատորի հետ կամ անցնի 3-րդ քայլին, եթե համակարգողը ներգրավված կողմն է։
3. **Պաշտոնական բողոք Ռեկտորին**։ Եթե խնդիրը չի լուծվում Ուսումնական Կենտրոնում, ուսանողը պետք է պաշտոնական բողոքարկման դիմում ներկայացնի Ռեկտորին։ Բողոքը կարող է գրվել ուսանողի լեզվով և պետք է ներառի՝
    1) Ուսանողի անունը
    2) Ուսումնական Կենտրոնի անվանումը
    3) Այն մարդկանց անունները, ովքեր ներգրավված են դրա մեջ
    4) Միջադեպի ամսաթիվը
    5) Միջադեպի նկարագրությունը և նախկինում կատարված ցանկացած միջամտություն/միջնորդություն
    6) Պահանջի պաշտպանությունը /պատճառը, թե ինչու ուսանողը կարծում է, որ գործողությունն արդարացված չէ։
    7) Դասախոսի և/կամ Ուսումնական կենտրոնի համակարգողի/ադմինիստրատորի հետ հանդիպումների հաստատումը և համապատասխան մանրամասները։

Ուսանողներին խստորեն խրախուսվում է իրենց նախնական բողոքարկումն անել որոշման ընդունման քննարկումից հետո 30 օրվա ընթացքում: Որոշման օրվանից 12 ամիս անցնելուց հետո այն չի քննարկվի: Հարցի հետագա բողոքարկումները պետք է տեղի ունենան ոչ ուշ, քան նախորդ բողոքարկման որոշումից 30 օր հետո:

Որոշում կայացնելու, կամ լրացուցիչ տեղեկություններ պահանջելու համար, վերաքննիչ բողոքի նախնական վերանայումը տեղի կունենա ստացումից հետո 30 օրվա ընթացքում: Պաշտոնական որոշումը կկայացվի յուրաքանչյուր մակարդակում վերաքննիչ բողոքի ստացումից հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

# III. ՖԻՆԱՆՍՆԵՐ

EuNC--ում որակյալ բարձրագույն աստվածաբանական կրթություն տրամադրելու արժեքը կազմում է մոտավորապես €200 մեկ ECTS-ի համար: Միայն եկեղեցիների և բարերարների հավատարիմ աջակցության շնորհիվ է, որ Քոլեջը կարող է ուսանողների համար ապահովել ուսման վարձի ողջամիտ մակարդակ: Ֆինանսավորման ամենամեծ կրճատումները ձեռք են բերվում Համաշխարհային Ավետարանաչության Հիմնադրամի տարածաշրջանային հատկացումների, տարեկան կրթական բյուջեների և տեղական եկեղեցիների նվիրատվությունների միջոցով: Նվիրատվություններից կախված՝ ուսանողների համար կարող են հասանելի լինել անհատական կրթաթոշակներ:

EuNC-ն ունի փոփոխական ուսման վարձ, որը սովորաբար կախված է ուսանողի բնակության երկրից: Ուսման վարձը բաղկացած է ընդհանուր վճարից, դասի վճարից և կենսաապահովման արժեքի նպաստից (COLA), որը կիրառվում է ստորև նշված չափանիշներին համապատասխան: Ընդհանուր վճարը վարչակազմի կողմից օգտագործվում է ամբողջ քոլեջին մատուցվող կենտրոնացված ծառայությունները ֆինանսավորելու համար, մինչդեռ ուսման վարձերը և կրթաթոշակները օգտագործվում են Ուսումնական Կենտրոնի գործնական բյուջեն ֆինանսավորելու համար:

Ուսանողի հաշվարկային ծածկագրի հիման վրա կիրառվում են հետևյալ վճարները:

| Վճարման կոդը | Ուսանողի բնակության երկիրը | Դասընթացի արժեքը մեկ ECTS-ի համար* | COLA կրթաթոշակ մեկ ECTS-ի համար | Ուսանողի համար ճշգրտված տոկոսադրույքը մեկ ECTS-ի համար |
|---|---|---|---|---|
| E3 | Իտալիա | €33,00 | €10,00 | €23,00 |
| E4 | Պորտուգալիա | €38,00 | €16,00 | €22,00 |
| E5 | Ֆրանսիա և Հունգրիա | €28,00 | €11,00 | €17,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| E6 | Ալբանիա, Բուլղարիա, Կոսովո, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Ռումինիա, Խորվաթիա, Սլովենյա | €28,00 | €18,00 | €10,00 |
| E7 | Հայաստան | €25,00 | €19,00 | €6,00 |
| E8 | Իսպանիա | €28,00 | €15,00 | €13,00 |
| E9 | Դանիա, Նորվեգիա, Շվեդիա և ցուցակում չընդգրկված երկրներից սովորող ուսանողներ, որոնք սովորում են Օնլայն Քոլեջում | €48,00 | €0,00 | €48,00 |
| EA | Կենտրոնական Ասիա, Վրաստան, Մոլդովա, Ռուսաստան, Ուկրաինա | €25,00 | €18,00 | €7,00 |
| EB | Բելգիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ | €62,00 | €0,00 | €62,00 |
| EC | Եգիպտոս, Իրաք, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Սիրիա | €10,00 | €0,00 | €10,00 |
| ED | Գերմանիա, Շվեյցարիա | €58,00 | €0,00 | €58,00 |
| N2 | Երկրներ, որոնք չեն սահմանվել մյուս հաշվարկային սակագներում | €60,00 | €0,00 | €60,00 |

*Այն ներառում է յուրաքանչյուր ECTS-ի համար € 3.00 ֆիքսված ընդհանուր վճարը:

Կիրառվում են հետևյալ ֆինանսական կարգավորումները.

– Ուսանողները պարտավոր են վճարել միանվագ դիմումի վճար՝ € 23,00:
- Դասընթացներ լսող ուսանողները վճարում են յուրաքանչյուր ECTS-ի համար ճշգրտված ուսանողական վարձավճարի 50%-ը:
- EuNC/NBC համաձայնագրով առցանց դասընթացներ անցնող ուսանողները կվճարեն E9 տոկոսադրույքը:
- COLA կրթաթոշակը չի կիրառվում որևէ չհանձնված դասընթացի համար:

- Երբ ուսանողը բնակվում է Եվրասիական տարածաշրջանից դուրս և այդ երկրի Նազովրեցու Եկեղեցու կառույցի հետ չկան պաշտոնական գործընկերային կամ ծառայողական համաձայնագրեր, Քոլեջը կսահմանի ուսման վարձի որոշակի վճար այդ երկրի համար, որը կարող է ներառել կամ չներառել կրթաթոշակային աջակցություն ընդհանուր կամ տեղական ՈւԿ-ի մակարդակով: Նման դեպքերը կհաստատվեն Առաջնորդական Թիմի կողմից:
- Ուսանողները, ովքեր դասընթացի մեկնարկից հետո թողնում կամ հեռանում են դասընթացից կամ անցնում են աուդիտի, կարող են ստանալ ամբողջական կամ մասնակի փոխհատուցում: Գումարի վերադարձը հիմնված կլինի այն ամսաթվի վրա, երբ նրանք կտեղեկացնեն Համակարգողին/Ադմինիստրատորին: Այս փոխհատուցումը հիմնված է ավարտված դասընթացի տոկոսի վրա (հաշվարկվում է դասընթացի ծրագրի մեկնարկի և ավարտի ամսաթվերի վրա) համաձայն հետևյալ ժամանակացույցի.
    - Ավարտված է դասընթացի 0-25% — վարձի 100% վերադարձ;
    - Ավարտված է դասընթացի 26-50% — վարձի 50% վերադարձ;
    - Ավարտված է դասընթացի 50% կամ ավելին — վարձը չի վերադարձվում:
- Ուսումնական Կենտրոնները կարող են սահմանափակել այն ուսանողների ընդունելությունը, ովքեր չեն վճարել իրենց պարտքերը՝ հիմնվելով տեղական ՈւԿ-ի քաղաքականության վրա:
- Ուսումնական կենտրոնները կտեղեկացնեն ուսանողներին Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատված ցանկացած լրացուցիչ վճարի մասին, որը կարող է կիրառվել Ուսումնական Կենտրոնի մակարդակում:

# IV.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ

Հետևյալ քսաներեք կրթական արդյունքները նկարագրում են, թե ինչի է ձգտում հասնել European Nazarene College -ը իր կրթական ծրագրերի միջոցով: Դրանք բաժանված են չորս հիմնական կատեգորիաների, որտեղ արդյունքները առնչվում են գիտելիքներին, իրավասություններին, անհատական բնավորության գծերին և արդյունավետ ծառայության համար անհրաժեշտ համատեքստային խնդիրների նկատմամբ զգայունությանը:

EuNC-ի կողմից առաջարկվող անհատական դասընթացները նպաստում են այս բոլոր կրթական արդյունքների ձեռքբերմանը, ինչպես նշված է յուրաքանչյուր դասընթացի ուսումնական պլանում:

**Բովանդակություն**

Ծառայության համար անհրաժեշտ է Հին և Նոր Կտակարանների բովանդակության, Քրիստոնեական հավատքի աստվածաբանության, Եկեղեցու պատմության ու առաքելության իմացությունը: Այս դասընթացներում պետք է ներառվեն գիտելիքներ, թե ինչպես մեկնաբանել Սուրբ Գիրքը, սրբության վարդապետությունը և մեր Վեսլիական աստվածաբանության առանձնահատկությունները, ինչպես նաև Նազովրեցի Եկեղեցու պատմությունն ու քաղաքականությունը:

CN1 Աստվածաշունչ: Ուսանողները կծանոթանան Հին և Նոր Կտակարանների բովանդակությանն ու աստվածաբանությանը, պատմական նախադրյալներին և գրականության տարբեր տեսակներին, ինչպես նաև հերմենևտիկայի հիմնական խնդիրներին:

CN2 Աստվածաբանություն: Ուսանողները կծանոթանան քրիստոնեական աստվածաբանության տարբեր թեմաներին, դրանց պատմությունը և հատկապես Վեսլիական Սրբության աստվածաբանությանը և Նազովրեցու Եկեղեցու վարդապետություններին:

CN3 Եկեղեցի: Ուսանողները կիմանան եկեղեցու և շրջակա մշակույթի պատմությունը և հստակ պատկերացում կունենան եկեղեցու առաքելության և տեսլականի մասին:

CN4: Ծառայություն: Ուսանողները կունենան հատուկ գիտելիքներ,

որոնք անհրաժեշտ են եկեղեցու առաքելության տարբեր ոլորտներում արդյունավետ ծառայության համար:

CN5 Մարդիկ: Ուսանողները կունենան հատուկ գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց աշխատել տարբեր հանգամանքներում գտնվող մարդկանց հետ և կնախապատրաստեն նրանց զարգացնել համայնքը:

CN6 Գիտական գրագիտություն: Ուսանողները կզարգացնեն տեղեկացված տեսակետ և հարգանք ստեղծված կարգի նկատմամբ և կկիրառեն գիտական հետազոտության մեթոդներ այն ուսումնասիրելու համար:

**Իրավասություն**

Ծառայության համար բանավոր և գրավոր հաղորդակցման, կառավարման և առաջնորդության, ֆինանսների և վերլուծական մտածողության հմտությունները նույնպես կարևոր են: Այս ոլորտներում ընդհանուր կրթությունից բացի, պետք է ներառվեն դասընթացներ, որոնք տրամադրում են քարոզչական, հովվական խնամքի և խորհրդատվության, երկրպագության, արդյունավետ ավետարանչության, քրիստոնեական կրթության և եկեղեցու կառավարման հմտությունների վերաբերյալ: Ուսման դասընթացն ավարտելը պահանջում է կրթական մատակարարի և տեղական եկեղեցու համագործակցությունը, ուսանողներին ուղղորդելու ծառայողական պրակտիկաների և կարողությունների զարգացման մեջ:

CP1 Մեկնաբանություն: Հիմնավոր աստվածաբանական և էզգեգետիկ տեսակետից ուսանողները կկարողանան մեկնաբանել և կիրառել Սուրբ Գիրքը:

CP2 Հաղորդակցություն: Ուսանողները կկարողանան հստակ հաղորդակցվել մարդկանց հետ տարբեր ձևերով և տարբեր պարամետրերով, և նրանք կկարողանան հարգանքով ընդունել ուրիշների ուղերձները:

CP3 Առաջնորդություն: Ուսանողները կկարողանան մարդկանց ավելի մոտեցնել Աստծուն, առաջնորդել եկեղեցին արդյունավետ ծառայության մեջ և հմուտ լինել ինքնակառավարման և կազմակերպչական կառավարման մեջ:

CP4 Ծառայությոուն: Ուսանողները կկարողանան ծառայել անհատների և խմբերի տարբեր կարիքներին, ինչպես նաև ապահովել հովվական խնամք:

CP5 Անալիզ: Ուսանողները կկարողանան պատմական, աստվածաբանական և աստվածաշնչային ձևով վերլուծել և անդրադառնալ եկեղեցու և հասարակության ներկա իրավիճակներին:
CP6 Քննադատական մտածելակերպ: Ուսանողները կզարգացնեն վավերականությունը և ողջամտությունը որոշելու ունակությունը, տեղեկատվության, փաստարկների և փորձի ուսումնասիրության միջոցով:

**Բնավորություն**

Ծառայության համար կենսական նշանակություն ունի բնավորության, բարոյականության, հոգևորության և անձնական ու ընտանեկան հարաբերությունների անհատական աճը: Պետք է ներառվեն դասընթացներ, որոնք վերաբերում են քրիստոնեական էթիկային, հոգևոր ձևավորմանը, մարդկային զարգացմանը, ծառայողի անձին և ամուսնության և ընտանիքի դինամիկային:

CH1 Ինտեգրացիա: Ուսանողները կկարողանան իրենց ստացած գիտելիքները կիրառել իրենց անձնական կյանքում:
CH2 Փոխակերպում: Ուսանողները կաճեն առօրյա կյանքի բոլոր ասպեկտներում սրբությամբ ապրելու իրենց ցանկությամբ:
CH3 Նվիրում: Ուսանողները կկարողանան դառնալ Աստծո առաքելության նվիրված ծառաներն այս աշխարհում և կկատարեն իրենց հատուկ անձնական ծառայությունը:
CH4 Հոգևորություն: Ուսանողները կծանոթանան հոգևոր դիսցիպլիններին և իրենց ծառայության մեջ կկարողանան դրանք օգտագործել որպես անձնական ռեսուրս:
CH5 Ինքնահասկացողություն: Ուսանողները կընդունեն իրենք իրենց որպես արժեքավոր մարդիկ և կձևավորեն ապրելու սովորություններ, որոնք առողջ են հոգեպես և ֆիզիկապես:

**Համատեքստ**

Ծառայողը պետք է հասկանա թե՛ պատմական, թե՛ ժամանակակից համատեքստը և մեկնաբանի այն մշակույթի աշխարհայացքն ու սոցիալական միջավայրը, որտեղ եկեղեցին կատարում է իր վկայությունը: Ծրագրում պետք է ներառվեն մարդաբանության և

սոցիոլոգիայի, միջմշակութային հաղորդակցության, առաքելության և հասարակական գիտություններին առնչվող դասընթացներ:

CT1 Համապատասխանություն: Ուսանողները կկարողանան համապատասխան ձևերով հաղորդել Ավետարանը ժողովրդին որոշակի համատեքստում՝ օգտագործելով առողջ հերմենևտիկ սկզբունքներ:

CT2 Մշակութային զգայունություն: Ուսանողները զգայուն կլինեն տարբեր մշակութային համատեքստերի նկատմամբ և կկարողանան արդյունավետորեն ծառայել դրանց մեջ և դրանց միջև:

CT3 Կառավարում և ծառայություն: Ուսանողները կունենան ամբողջական տեսակետ այն տարբեր պարտականությունների վերաբերյալ, որոնք եկեղեցին ունի այս աշխարհի և նրա ժողովուրդների համար:

CT4 Ինտեգրացիա: Վեսլիական աստվածաբանական տեսանկյունից ելնելով ուսանողները պատրաստ կլինեն քրիստոնեական հավատքը կապել կյանքի բոլոր ոլորտների հետ:

CT5 Մշակույթ և հասարակություն: Ուսանողները ընդհանուր գիտելիքներ կունենան իրենց երկրի հասարակության և քաղաքական իրավիճակի, ինչպես նաև պատմության և մշակույթի մասին, որը նրանք կիսում են հարևան երկրների և տարածաշրջանների հետ:

CT6 Սոցիալական պատասխանատվություն: Ուսանողները այս աշխարհում կդառնան բանիմաց, հոգատար և ակտիվ քաղաքացիներ:

# V. EuNC-ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## Ա. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

European Nazarene College -ի ուսումնական ծրագիրը բաղկացած է հինգ կլաստերներից: Տարբեր ծրագրերում թվարկված բոլոր դասընթացները պատկանում են հինգ կլաստերներից մեկին (A-E):

Ուսումնական ծրագրի շրջանակներում հինգ խմբերի փոխկապակցվածությունը արտացոլում է այն, ինչ European Nazarene College-ը համարում է իր հիմնական առաքելությունը՝ ծառայողների կրթությունը: Ստորև բերված խմբերի նկարագրության մեջ նշված է նաև յուրաքանչյուր ծրագրի համար անհրաժեշտ ECTS քանակը: Սրանք յուրաքանչյուր ծրագրի համար նվազագույն պահանջներն են յուրաքանչյուր վայրում:

**Խումբ A: Աստվածաշունչ** (Դասընթացների բոլոր համարներն սկսվում են BIB կոդով)
Հիմնական աղբյուրը, որը ձևավորում է մեր տեսակետը Աստծո, Եկեղեցու, աշխարհի և ծառայության մասին, դա Սուրբ Գիրքն է: Հետևաբար, առաջնորդություն և ոգեշնչում ստանալու համար ուսանողները պետք է ունենան Սուրբ Գրքի վերաբերյալ մանրամասն գիտելիքներ:

**Խումբ B: Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն** (Դասընթացների բոլոր համարներն սկսվում են THE կոդով)
Մեր աստվածաբանությունը բխում է Սուրբ Գրքից և լրացվում է ավանդությունով, բանականությամբ և փորձով (Վեսլիական Քառանկյուն): Դա մեր առանձնահատուկ Վեսլիական աստվածաբանությունն է, որը սահմանում է մեր ինքնությունը և նկարագրում է, թե ով ենք մենք որպես եկեղեցի:

**Խումբ C: Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, Կոչում** (Դասընթացների բոլոր համարներն սկսվում են MIS, PAS և PRC կոդերով)
Ուսումնական ծրագրի առանցքը Աստծո սրտի և աշխարհում Նրա առաքելության աստվածաշնչյան ըմբռնումն է: Եկեղեցու մեր ըմբռնումը և մեր կյանքը որպես կոչում, պետք է ներծծված լինի առաքելության այս

ըմբռնմամբ և հավատացյալները պետք է իրենց տեղը գտնեն Աստծո աշխատանքում, որպեսզի Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու միջոցով կատարեն այդ առաքելությունը:

**Խումբ D: Ծառայողական Հմտություններ** (Դասընթացների բոլոր համարներն սկսվում են MIN կոդով)
Եկեղեցու հիմնական ծառայություններն ուսումնասիրելու և մյուս խմբերի դասընթացների միջոցով համապատասխան գիտելիքներ ստանալու հետ մեկտեղ, ուսանողները կուսումնասիրեն հատուկ ծառայություններ կամ ծառայողի դերերը և կզարգացնեն անհրաժեշտ իրավասությունները:

**Խումբ E. Ակադեմիական հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ** (Դասընթացների բոլոր համարներն սկսվում են ACP, GEN և SOC կոդերով)
Ուսանողները պետք է տիրապետեն այն կարողություններին, որոնք նրանց հաջողակ կդարձնեն իրենց ուսման մեջ: Նրանք նաև պետք է ցույց տան, որ ի վիճակի են իրենց սովորածը ինտեգրել ընդհանուր համապարփակ տեսակետի մեջ:

# Բ. EuNC-Ն ԵՎ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բոլոնիայի գործընթացը, որը մեկնարկել է 1999 թվականի Բոլոնիայի Հռչակագրով, Եվրոպական մակարդակի հիմնական կամավոր գործընթացներից մեկն է, քանի որ այն այսօր իրականացվում է Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի (EHEA) կազմող երկրների կողմից (www.ehea.info):

Բոլոնիայի Գործընթացի առավել ակնհայտ բնութագիրը Կրեդիտների Փոխանցման և Կուտակման Եվրոպական Համակարգն է (ECTS), քանի որ այն մտադիր է ազգային սահմաններից դուրս զարգացնել համադրելի կրթական համակարգ: Այն ուսանողակենտրոն համակարգ է, որը հիմնված է դասընթացի կամ ծրագրի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ուսումնական ժամերի քանակի վրա: ECTS համակարգը պահանջում է, որ յուրաքանչյուր առաջադրանքում նշված լինի այդ պահանջը բավարարելու համար անհրաժեշտ ուսումնական ժամերի մոտավոր քանակը:

EuNC-ն հետևում է Եվրոպական կրեդիտային համակարգին և բոլոր դասընթացների համար սահմանել է 1 ECTS՝ 30 ուսանողական ուսումնական ժամի համար: Այս ժամերը ներառում են բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են նախատեսված կրթական արդյունքներին հասնելու համար:

**Փոխանցում Ոչ EHEA Քոլեջի Կրեդիտային Համակարգից**

EuNC-ի կողմից օգտագործվող փոխանցումը հետևյալն է՝

–ECTS և ԱՄՆ Քոլեջի Կրեդիտի (Carnegie ystem) տարբերությունն է՝

1 ECTS = 0,60 ԱՄՆ Քոլեջի Կրեդիտային ժամ:

–ECTS և Միացյալ Թագավորության  CATS (Credit Accuulation and Transfer Scheme) կրեդիտի տարբերությունն է՝  1 ECTS = 3 CATS:

- Այլ կրեդիտային համակարգերի դեպքում ուսումնական ժամերը օգտագործվում են կրեդիտների փոխանցումը որոշելու համար՝ 1 ECTS = 30 ուսումնական ժամ հարաբերակցությամբ:

# Գ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ EuNC-ՈՒՄ

## 1. *Նպատակը*

EuNC-ի կրթական փիլիսոփայությունը կենտրոնացած է միսիայի և ծառայության  նախապատրաստվելու վրա և այդ արդյունքներին կարելի է հասնել ակադեմիական գերազանցության, շարունակական հոգևոր ձևավորման, ինչպես նաև ծառայողական հմտությունների ու կարողությունների կիրառման ու զարգացման միջոցներով, որոնք պրոֆեսիոնալ են և արտացոլում են «ծառայի» ծառայության Քրիստոսանման վերաբերմունքը:

Մենք գիտակցում ենք, որ ծառայության պատրաստությունը չի կարող սահմանափակվել միայն այն ամենով, ինչ տեղի է ունենում դասարանում և այն երբեք չի կարող չափվել պաշտոնական ակադեմիական արձանագրությամբ:  EuNC-ում ուսանողների զարգացման գործառույթն է աջակցել, կատարելագործել և լրացնել ակադեմիական ուսումնական միջավայրը, որպեսզի յուրաքանչյուր

ուսանող կարողանա հնարավորինս շատ բան շահել EuNC-ի հետ փոխգործակցությունից:

EuNC-ին ընդունել է կրթական արդյունքների ցանկը: Դրանք չորս C -ն են (Four C's) (Բովանդակություն, Իրավասություն, Բնավորությունը և Համատեքստը), որոնք անհրաժեշտ պայմաններ են Նազովրեցու Եկեղեցու ձեռնադրված ծառայողների նախապատրաստման համար: Ուսանողների Զարգացման գործողություններն ու ջանքերն ուղղակիորեն աջակցում են այս Կրթական Արդյունքներին, սակայն իսկապես շահավետ լինելու համար այդ ջանքերը պետք է ներգրավեն ուսանողներին հարաբերությունների և երկխոսության համատեքստում: Միայն այս համատեքստում ուսանողների զարգացման ջանքերը կարող են անդրադառնալ հիմնական զարգացման խնդիրներին այն կարևոր կետերում, որտեղ ուսանողի կարիքները և ցանկալի Կրթական Արդյունքները հատվում են:

EuNC-ի ծրագրերից մեկում ընդգրկված ուսանողների համար ուսանողների զարգացումը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

1. Ծանոթացման և Ողջույնի Միջոցառումներ
2. EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն
3. Ուսանողների Ուսումնական Համայնքներ
4. Ուղղորդում կամ Մենթորինգ
5. Ակտիվ ներգրավվածություն տեղական եկեղեցում
6. Ավարտական հանդիսություն և տոնակատարություն

## 2. *Ընդհանուր Ակնարկ*

### 1) Ծանոթացման և Ողջույնի Միջոցառումներ

Նպատակը: Տեղական ուսումնական համայնքում ողջունել համայնքի նոր անդամներին՝ ուսանողներին, դասախոսներին և աշխատակիցներին և հնարավորություն տալ վերադարձող անդամներին մտորելու, վերանայելու և վերականգնելու իրենց կապերը համայնքի հետ, ինչպես նաև հասկանալու EuNC -ում մաս լինելու իրենց նպատակը:

Նկարագրությունը: Արդյունավետ մասնակցության համար համայնքի նոր անդամներին անհրաժեշտ է տեղեկատվություն իրենց նոր միջավայրի մասին և նրանք պետք է ակտիվորեն

ընդգրկվեն այդ համայնքի ընկերակցության մեջ: Որոշ վայրերում դա կարող է ունենալ երկրպագության և հաղորդակցության երեկո: Այլ վայրերում կողմնորոշման և ողջույնի միջոցառումները կարող են տեղի ունենալ առանձնացված հանգստի կամ մեկօրյա էքսկուրսիայի համատեքստում: Նախքան դեմ առ դեմ որևէ հանդիպում տեղի ունենալը կողմնորոշիչ տեղեկությունների մի մասը կարող է առաքվել առցանց կապի, կամ էլ.փոստի միջոցով: Ինչպիսին էլ լինի միջավայրը, ինչպիսի ձևաչափ էլ լինի, համայնքի զարգացման այս նախնական ներդրումը երկարաժամկետ հեռանկարում այն արժանի ներդրում է նրանց համատեղ ակադեմիական ջանքերում:

**2) EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն**

**Նպատակը:** Ուսանողներին կողմնորոշել EuNC-ի ակադեմիական միջավայրը և ակադեմիական ակնկալիքները և համոզվել, որ նրանք ծանոթանում են հիմնական ակադեմիական տեղեկատվությանն ու համակարգերին, որոնք անհրաժեշտ են իրենց ուսումը հաջողությամբ շարունակելու համար:

Նկարագրությունը: Սա առցանց կողմնորոշում է, որը պետք է ընդունվի որպես առաջին դասընթաց: Այն ապահովում է էական տեղեկատվություն, որպեսզի ուսանողը հաջողությամբ հանդես գա EuNC-ի դասընթացների ակադեմիական «մշակույթում»: Այս դասընթացը անվճար է և որևէ կրեդիտ չի տրամադրում:

**3) Ուսանողների Ուսումնական Համայնքներ**

Նպատակը: Ստեղծել միջավայր, որտեղ ուսանողները կարող են լիարժեք զարգանալ, և որտեղ նրանց ակադեմիական կրթությունը կարող է լինել այդ զարգացման մի մասը:

Նկարագրությունը: Այլ ուսանողների հետ հարաբերություններ կառուցելը, ուրիշների համար իրազեկվածությամբ և մտահոգությամբ ապրելը և համայնքի ընկերակցությունից օգտվելը, անձնական զարգացման հնարավորություններ են: Մենք խրախուսում ենք ուսանողներին, անկախ նրանց գտնվելու վայրից, որպեսզի նրանք նպատակադրված օգտագործեն այսպիսի հնարավորությունները:

## 4) Ուղղորդում Կամ Մենթորինգ

Նպատակը: Տրամադրել կրթական ձևավորման փորձառություններ, որոնք ներդրումներ են կատարում ուսանողների բնավորության ձևավորման, կյանքի հմտությունների և հոգևոր ձևավորման մեջ: Ուսանողներին բազմակողմանի աջակցություն ցուցաբերելով անձնական մենթորները և մենթորական աշխատանքները նույնպես նպաստում են ուսանողների ակադեմիական զարգացմանը:

Նկարագրությունը: Մենթորության ձևաչափերը կարող են մեծապես տարբերվել տարբեր վայրերից, սակայն մենթորության նպատակը չի փոխվում, այսինքն՝ ներդրումներ կատարել ուսանողի ամբողջական զարգացման մեջ: Մենթորական ժամերը կարող են ներառել անհատական մենթորություն պրոֆեսորադասախոսական կազմի կամ այլ հաստատված ծառայության մենթորի հետ, փոքր խմբերի փորձառություններ, հոգևոր ձևավորման նախանջներ կամ գործողություններ կամ կենտրոնացված սեմինարներ կամ գործողություններ, որոնք շեշտում են ամբողջական զարգացումը և/կամ որոշակի կյանքի հմտությունների զարգացումը: Ուսանողները մենթորության համար ստանում են ակադեմիական կրեդիտներ: Ուսանողներին խորհուրդ է տրվում պահանջվող նվազագույն կրեդիտներ ստանալուց հետո շարունակել իրենց մենթորական հարաբերությունները (1 ECTS, CSF -ի համար, 2 ECTS, DCM -ի համար և 3 ECTS, ADAT -ի համար):

## 5) Ակտիվ Ներգրավվածություն Տեղական Եկեղեցում

Նպատակը: Ուսանողների ամբողջական զարգացումը խթանելու համար կրթական ծրագիրը նախատեսված է օգնելու նրանց հոգևորապես աճելու և խրախուսելու ավելի մեծ մասնակցություն ունենալու տեղական եկեղեցու կյանքում: Կրթական մատակարարի և տեղական եկեղեցու համագործակցության միջոցով ուսանողներին խրախուսվում է ներգրավվել հավատքի համայնքում, որպեսզի բնավորությունը և իրավասությունները զարգացնեն ուսանողների ակադեմիական զարգացմանը նպաստող ձևերով: Տեղական եկեղեցու միջոցով նրանք կստանան

հովվական խնամք, որը կնպաստի ուսանողների հոգևոր, զգացմունքային և սոցիալական բարեկեցությանը և զարգացմանը:

Նկարագրությունը: Քանի որ ուսանողները հեռակա են սովորում իրենց տեղական շրջաններում, նրանց համար կարևոր է լինել ժողովի/շրջանի ակտիվ մասը, որն ապահովում է հոգևոր աճ, ծառայողական պրակտիկա, առաջնորդություն, բնավորություն և անհատական զարգացման հնարավորություններ: Ծրագրերի ուսումնական ծրագիրը հարմարեցված է յուրաքանչյուր տեղական համատեքստին, ինչը նպաստում է ուսանողների զարգացմանը:

## 6) Ավարտական Հանդիսություն ԵՎ Տոնակատարություն

Նպատակը: Տոնել ծրագրերի ավարտը որպես համայնքային միջոցառում ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների, առաջնորդների և եկեղեցու անդամների հետ հնարավորություն տալով շրջանավարտ ուսանողներին զգալ համայնքային ամբողջության զգացում և ձևավորել Քոլեջի բարոյական կերպարը:

Նկարագրությունը: Որպեսզի կրթության ավարտը ուսանողների համար լինի այնպիսին ինչպիսին եղել է կրթության սկիզբը, և այդ ուսանողները լինելով որպես հասարակության ակտիվ մասնակիցներ, նրանց պետք է թույլ տրվի ավարտել քրիստոնեական արարողությունը և/կամ համայնքային տոնակատարությունը, որը ներառում է տեղական Քոլեջներ և եկեղեցական համայնքները: Այս հանրային միջոցառումը ծառայում է որպես ներդրում համայնքի զարգացման մեջ՝ ուսանողներին հնարավորություն տալով նշելու իրենց կրթական նվաճումները:

# VI. EuNC-Ի ԾՐԱԳՐԵՐԸ

EuNC-ին առաջարկում է երեք ծրագիր, որոնք հավատարմագրված են Եվրոպական Աստվածաբանական Կրթության Խորհրդի (ECTE) կողմից և մշակված են մեկը մյուսի վրա հաջորդականությամբ կառուցելու համար:

- **Հոգևոր Ձևավորման Վկայական** (CSF, 60 ECTS)
- **Քրիստոնեական Ծառայության Դիպլոմ** (DCM, 120 ECTS)
- **Կիրառական Աստվածաբանության Առաջադեմ Դիպլոմ** (ADAT, 180 ECTS)

Ուսումնական ծրագիրը մշակված է այն գիտակցմամբ, որ ոչ մի կրթական ծրագիր ինքնին ամբողջական չէ, այլ պետք է դիտարկվի որպես ողջ կյանքի ընթացքում որպես ուսուցման հիմք:

Հաջորդ էջերում նկարագրված են այս ծրագրերի ընդհանուր արդյունքները և նվազագույն պահանջները: Փակագծերում նշված հապավումները ներկայացնում են IV Բաժնում նկարագրված նախատեսված կրթական արդյունքները: Յուրաքանչյուր վայրում ձեռնադրության մանրամասն պահանջների համար խնդրում ենք տեսնել «Ձեռնադրության Պահանջներ» վերնագրով լրացուցիչ փաստաթուղթը: Դասընթացների կոնկրետ նկարագրությունների համար դիմեք Բաժնին VIII:

# Ա. ՀՈԳԵՎՈՐ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ (CSF)

***Նկարագրությունը***

Հոգևոր Ձևավորման Վկայականը (60 ECTS) խորացնում է ուսանողների գիտելիքները Աստվածաշնչի և քրիստոնեական հավատքի վերաբերյալ, միաժամանակ խթանելով հոգևոր աճը և ավելի մեծ ներգրավվածությունը տեղական եկեղեցում:

Վկայականը հավատարմագրված է **Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (ECTE)** կողմից, մասամբ համապատասխանում է **EQF 5-րդ Մակարդակի** պահանջներին և համապատասխանում է **QF-EHEA-ի Կարճ Ցիկլի** (մասնակի) որակավորմանը: ICETE որակավորման շրջանակի շրջանակներում այս ծրագիրը համապատասխանում է **Վկայականի Մակարդակին:**

**Ծրագրի Կրթական Արդյունքները**

Հոգևոր Զևավորման Վկայականով ավարտած ուսանողները կունենան.

- Սուրբ Գրքի (CN1) և քրիստոնեական հավատքի ասպեկտների հիմնարար գիտելիքներ, հատկապես Վեսլիական տեսանկյունից (CN2):
- Եկեղեցու առաքելության (CN3) հստակ ըմբռնում և տեսլական, ինչպես նաև աշխարհի և նրա ժողովրդի հանդեպ եկեղեցու պատասխանատվություն (CT3):
- Կսկսեն կիրառել իրենց սովորած գիտելիքները իրենց անձնական կյանքում (CH1):
- Առօրյա կյանքի բոլոր ասպեկտներում նրանք կաճեն սուրբ կյանքի իրենց ձգտումների մեջ (CT4) և տարբեր հոգևոր առարկաների հետ ծանոթության միջոցով կաճեն որպես անհատներ(CH2), տարբեր հոգևոր առարկաների հետ ծանոթանալու միջոցով (CH4):
- Ավելի մեծ տեղեկացվածություն, թե ովքեր են նրանք որպես անձնավորություն (CH5) և աշխարհում Աստծո Առաքելության մեջ ներգրավված ծառաներ (CH3):

***Ավարտելու Համար Նվազագույն Ակադեմիական Պահանջները***

- Ծրագրում կհաշվարկվեն միայն անցողիկ գնահատականներով դասընթացները:
- Ուսանողը պետք է լրացնի նվազագույնը 60 ECTS, որը բաշխված է հետևյալ կերպ.

| **Դասընթացների խմբերը** | **Դասընթացի անվանումը** | **ECTS** |
|---|---|---|
| A. Աստվածաշունչ<br>15 ECTS | Հին Ուխտի Ներածություն<br>Նոր Կտակարանի Ներածություն<br>Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ | 5<br>5<br>5 |
| B.Աստվածաբանութ_յուն, Ավանդություն և Ինքնություն<br>6 ECTS | Վարդապետության Ներածություն<br>Սրբություն և Եկեղեցու Ինքնություն | 3<br><br>3 |

| | | |
|---|---|---|
| C. Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, կոչում 15 ECTS | Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, Կանչ և Անձնական Ծառայություն,<br>Հոգևոր Զնավորում,<br>Ուղղորդում կամ Մենթորինգ,<br>Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում կամ Քրիստոնեական Երկրպագություն,<br>Քրիստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում | 3<br><br>2<br>3<br>1<br><br><br>3<br>3 |
| D. Ծառայողական Հմտություններ 4 ECTS | Ընտրովի դասընթացներ: Քարոզաբանություն; Երիտասարդական Ծառայության Հիմունքներ, Հովվական Խնամք և Հոգաբարձություն; Եկեղեցական Առաջնորդություն<br>Պրակտիկա | 3<br><br>1 |
| E. Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ 5 ECTS | EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 2 | 0<br>3<br>2 |
| *Ընտրովի Դասընթացներ* | | 15 |
| **Ընդամենը** | | **60** |

# Բ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՊԼՈՄ (DCM)

***Նկարագրությունը***

Քրիստոնեական Ծառայության Դիպլոմը (120 ECTS) ուսանողներին պատրաստում է տեղական եկեղեցում ծառայության համար: Կախված յուրաքանչյուր շրջանի կողմից սահմանված չափանիշներից՝ այս ծրագիրը կարող է բավարարել Նազովրեցու Եկեղեցում ձեռնադրված ծառայության նվազագույն պահանջները: Որոշ շրջաններում կարող է

պահանջվել 120 ECTS-ից բացի լրացուցիչ դասընթացներ:

Դիպլոմը հավատարմագրված է **Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (ECTE)** կողմից, համապատասխանում է **EQF 5-րդ Մակարդակի** պահանջներին և համապատասխանում է **QF-EHEA-ի Կարճ Ցիկլի** որակավորմանը: ICETE որակավորման շրջանակի շրջանակներում այս ծրագիրը համապատասխանում է **Դիպլոմի Մակարդակին**: Այն նաև Միջազգային Ուսումնական Ծրագրի Խորհրդատվական կոմիտեի (ICOSAC) կողմից վավերացված ծրագիր է:

**Ծրագրի Կրթական Արդյունքները**

Քրիստոնեական Ծառայության Դիպլոմով ավարտած ուսանողները կունենան.

- Սուրբ Գրքի (CN1), քրիստոնեական հավատքի ասպեկտների և եկեղեցու պատմության (CN3) վերաբերյալ հիմնական գիտելիքներ, հատկապես Վեսլիական տեսանկյունից (CN2):
- Եկեղեցու առաքելության (CN3) հստակ ըմբռնում և տեսլական, ինչպես նաև աշխարհի և նրա ժողովրդի հանդեպ եկեղեցու պատասխանատվություն (CT3):
- Արդյունավետ ծառայության (CN4) և մարդկանց հետ աշխատելու համար անհրաժեշտ հիմնական գիտելիքներ (CN5):
- Սուրբ Գիրքը (CP1) մեկնաբանելու և տարբեր մշակութային համատեքստերում արդյունավետ հաղորդակցվելու (CT1) հիմնական հմտություններ (CT2):
- Մարդկանց հետ հստակ հաղորդակցվելու հիմնական հմտություններ (CP2), առաջնորդություն ապահովելու (CP3) և մարդկանց հովվական խնամք տրամադրելու (CP4) ունակություններ:
- Իրենց անձնական կյանքում քրիստոնեական ըմբռնումը կիրառելու հմտություններ (CH1):
- Առօրյա կյանքի բոլոր ասպեկտներում նրանք կաճեն սուրբ կյանքի իրենց ձգտումների մեջ (CT4) և տարբեր հոգևոր առարկաների հետ ծանոթության միջոցով (CH4), կաճեն որպես անհատներ(CH2):
- Ավելի մեծ տեղեկացվածություն, թե ովքեր են նրանք որպես անձնավորություն (CH5) և աշխարհում Աստծո Առաքելության մեջ ներգրավված ծառաներ (CH3):

*Ավարտելու Համար Նվազագույն Ակադեմիական Պահանջները*

- Ծրագրում կհաշվարկվեն միայն անցողիկ գնահատականներով դասընթացները:
- Ուսանողը պետք է լրացնի նվազագույնը 120 ECTS, որը բաշխված է հետևյալ կերպ.

| **Դասընթացների խմբերը** | **Դասընթացի անվանումը** | **ECTS** |
|---|---|---|
| A. Աստվածաշունչ<br>25 ECTS | Հին Ուխտի Ներածություն<br>Նոր Կտակարանի Ներածություն<br>Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ<br>Հնգամատյան և/կամ ՀՈւ-ի մարգարեներ<br>Սինոպտիկ Ավետարաններ և/կամ Պողոս Առաքյալի Թղթերը | 5<br>5<br>5<br>5<br>5 |
| B.Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն<br>23 ECTS | Վարդապետության Ներածություն<br>Սրբություն և Եկեղեցու Ինքնություն<br>Քրիստոնեական Վարդապետություններ<br>Նազովրեցու Եկեղեցու Պատմությունը և Նրա Կառավարումը<br>Եկեղեցու Պատմություն<br>Քրիստոնեական Էթիկա | 3<br>3<br>6<br>3<br>5<br>3 |
| C. Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, կոչում<br>23 ECTS | Աստծո Առաքելությունը և Եկեղեցին<br>Կանչ և Անձնական Ծառայություն<br>Հոգևոր Ձևավորում<br>Ուղղորդում կամ Մենթորինգ<br>Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում<br>Միջմշակութային Միսիաներ<br>Քրիստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում<br>Քրիստոնեական Երկրպագություն | 3<br>2<br>3<br>2<br>3<br>4<br>3<br>3 |

| | | |
|---|---|---|
| D. Ծառայողական Հմտություններ 19 ECTS | Ընտրովի դասընթացներ: Քարոզաբանություն; Երիտասարդական Ծառայության Հիմունքները; Հովվական Խնամք և Հոգաբարձություն; Քրիստոնեական Առաջնորդություն<br>Պրակտիկա<br>Ինտերնատուրա<br>Եկեղեցական Ծառայության Վերջնական Առարկան<br>Ընտրովի դասընթացներ: Լրացուցիչ Պրակտիկա<br>Ինտերնատուրա | 10<br>1<br>3<br><br>3<br><br>2 |
| E. Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ 10 ECTS | EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 2<br>Մարդկային Աճ ու Զարգացում<br>Միջանձնային Հաղորդակցություն | 0<br><br>3<br><br>2<br>3<br><br>2 |
| *Ընտրովի Դասընթացներ* | | 20 |
| **Ընդամենը** | | 120 |

# Գ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՊԼՈՄ (ADAT)

***Նկարագրությունը***

Կիրառական Աստվածաբանության Առաջադեմ Դիպլոմը (180 ECTS) ապահովում է աստվածաբանության ավելի խորը ըմբռնում՝ կիրառված ժամանակակից հասարակության քրիստոնեական ծառայության մեջ: Ուսանողները ներգրավված են գործնական հոգևոր ծառայության մեջ և զարգացնում են իրենց հովվական հմտությունները և քննադատորեն մտածելով այն մասին, թե ինչ են նրանք սովորում իրենց անձնական փորձի և ժամանակակից հասարակության խնդիրների հետ փոխազդեցության միջոցով:

Առաջադեմ Դիպլոմային ծրագիրը հավատարմագրված է **Աստվածաբանական Կրթության Եվրոպական Խորհրդի (ECTE)** կողմից, որը համապատասխանում է **EQF 6-րդ Մակարդակի** պահանջներին և համապատասխանում է **QF-EHEA-ում Առաջին Ցիկլի Որակավորմանը**: Այս ծրագիրը համապատասխանում է ICETE Որակավորման Շրջանակի Բակալավրի Մակարդակին:

Նշում: Այս ծրագիրը կարող է հասանելի չլինել բոլոր ուսումնական կենտրոններում: Հասանելիության համար դիմեք հատուկ Ուսումնական Կենտրոն:

**Ծրագրի Կրթական Արդյունքները**

Կիրառական Ծառայության Առաջատար Դիպլոմով ավարտած ուսանողները կունենան.

- Սուրբ Գրքի (CN1), քրիստոնեական հավատքի ասպեկտների և եկեղեցու պատմության (CN3) վերաբերյալ հիմնական գիտելիքներ, հատկապես Վեսլիական տեսանկյունից (CN2):
- Եկեղեցու առաքելության (CN3) հստակ ըմբռնում և տեսլական, ինչպես նաև աշխարհի և նրա ժողովրդի հանդեպ եկեղեցու պատասխանատվություն (CT3):
- Արդյունավետ ծառայության (CN4) և մարդկանց հետ աշխատելու համար անհրաժեշտ հիմնական գիտելիքներ (CN5):
- Սուրբ Գիրքը (CP1) մեկնաբանելու և տարբեր մշակութային համատեքստերում արդյունավետ հաղորդակցվելու (CT1) հմտություններ (CT2):
- Մարդկանց հետ հստակ հաղորդակցվելու հմտություններ (CP2), առաջնորդություն ապահովելու (CP3) և մարդկանց հովվական խնամք տրամադրելու (CP4) ունակություններ:
- Իրենց անձնական կյանքում քրիստոնեական ըմբռնումը կիրառելու հմտություններ (CH1):
- Առօրյա կյանքի բոլոր ասպեկտներում նրանք կաճեն սուրբ կյանքի իրենց ձգտումների մեջ (CT4) և տարբեր հոգևոր առարկաների հետ ծանոթության միջոցով (CH4), կաճեն որպես անհատներ(CH2):
- Ավելի մեծ տեղեկացվածություն, թե ովքեր են նրանք որպես անձնավորություն (CH5) և աշխարհում Աստծո Առաքելության մեջ ներգրավված ծառաներ (CH3):
- Հասարակության, Աստվածաշնչի և աստվածաբանության

ժամանակակից խնդիրները քննադատաբար արտացոլելու և ներգրավվելու կարողություն (CP5, CP6):

- Իրենց ուսումը գործնականում կիրառելու կարողություն (CP4), քննադատաբար անդրադառնալով իրենց փորձի արդյունքներին (CP5, CP6):

*Ավարտելու Համար Նվազագույն Ակադեմիական Պահանջները*

- Ծրագրում կհաշվարկվեն միայն անցողիկ գնահատականներով դասընթացները:
- Ուսանողը պետք է լրացնի նվազագույնը 180 ECTS, որը բաշխված է հետևյալ կերպ՝

| **Դասընթացների խմբերը** | **Դասընթացի անվանումը** | **ECTS** |
|---|---|---|
| A. Աստվածաշունչ<br>35 ECTS | Հին Ուխտի Ներածություն<br>Նոր Կտակարանի Ներածություն<br>Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ<br>Հնգամատյան և/կամ ՀՈւ-ի Մարգարեներ<br>Սինոպտիկ Ավետարաններ և/կամ Պողոս Առաքյալի Թղթերը<br>Այս խմբից ընտրովի 2 առարկա | 5<br>5<br>5<br><br>5<br><br>5<br><br><br>10 |
| B.Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն<br>29 ECTS | Վարդապետության Ներածություն<br>Սրբություն և Եկեղեցու Ինքնություն<br>Քրիստոնեական Վարդապետություններ<br>Նազովրեցու Եկեղեցու Պատմությունը և Նրա Կառավարումը<br>Եկեղեցու Պատմություն<br>Քրիստոնեական Էթիկա<br>Այս խմբից ընտրովի 2 առարկա | 3<br>3<br><br>6<br><br>3<br><br>5<br>3<br>6 |

| | | |
|---|---|---|
| C. Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, կոչում 30 ECTS | Աստծո Առաքելությունը և Եկեղեցին<br>Կանչ և Անձնական Ծառայություն<br>Հոգևոր Ձևավորում<br>Ուղղորդում կամ Մենթորինգ<br>Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում<br>Միջմշակութային Միսիաներ<br>Քրիստոնեական Կրթությունը<br>Տեղական Համայնքում<br>Քրիստոնեական Երկրպագություն<br>Ծառայողի Բազմակողմանի Բարեկեցությունը<br>Այս խմբից ընտրովի 1 առարկա | 3<br>2<br>3<br>3<br>3<br>4<br>3<br>3<br>3<br>3 |
| D. Ծառայողական Հմտություններ 29 ECTS | Ընտրովի դասընթացներ:<br>Քարոզաբանություն; Երիտասարդական Ծառայության Հիմունքները; Հովվական Խնամք և Հոգաբարձություն; Եկեղեցական Առաջնորդություն<br>Պրակտիկա<br>Ինտերնատուրա<br>Եկեղեցական Ծառայության Վերջնական Առարկան<br>Ընտրովի դասընթացներ:<br>Լրացուցիչ Պրակտիկա<br>Ինտերնատուրա<br>Վերջնական վերանայում<br>Ընտրովի դասընթացներ:<br>Լրացուցիչ Պրակտիկա<br>Ինտերնատուրա<br>Աստվածաբանական Մտորումներ | 15<br>1<br>3<br>3<br>5<br>2 |

| | | |
|---|---|---|
| E.Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ 13 ECTS | EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1<br>Ակադեմիական Ունակությունների Զարգացում 2<br>Մարդկային Աճ ու Զարգացում<br>Միջանձնային Հաղորդակցություն<br>Այս խմբից ընտրովի 1 առարկա | 0<br>3<br>2<br>3<br>2<br>3 |
| *Ընտրովի Դասընթացներ* | | 44 |
| **Ընդամենը** | | **180** |

# VII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Դասընթացի ծածկագրերը պարունակում են տառեր և թվեր: Թվերը նշում են այն շրջանը և/կամ խումբը, որտեղ առաջարկվում է այդ դասընթացը: Երկնիշ թիվը ցույց է տալիս թե այդ դասընթացը որ խմբին է պատկանում: Օրինակ՝ BIB11 = Հին Կտակարանի Ներածությանը: Առաջին թիվը ցույց է տալիս, թե ինչ բարդության է դասընթացը: Ավելի ցածր թվային ծածկագրով դասընթացներ կանցկացվեն ծրագրի ավելի վաղ շրջանակներում: Նախընտրելի է, որ ավելի բարձր թվային ծածկագրով դասընթացներն անցկացվեն դասընթացի եզրափակիչ փուլում:

Ստորև բերված դասընթացների համարները դասընթացի ամբողջական ծածկագրերը չեն: Դասընթացների ամբողջական ծածկագրերն ունեն չորս նիշ: Երրորդ թիվը ցույց է տալիս, թե արդյոք դասընթացը բաժանված է համապատասխան մասերի: THE211x-ը “Քրիստոնեական Վարդապետություններ” առարկայի առաջին մասն է, իսկ THE212x-ը երկրորդ մասը: Չորրորդ նիշը ցույց է տալիս ECTS միավորների քանակը, որոնք ուսանողները ստանում են դասընթացի հաջող ավարտից հետո: Դրանք սովորաբար տատանվում են 0-ից 6 կրեդիտների միջև: THE2323-ը ցույց է տալիս, որ Եկեղեցու Պատմության երկրորդ մասը առաջարկվում է 3 ECTS-ի համար:

Դասընթացների այս ցանկը ներկայացնում է EuNC-ի կողմից առաջարկվող բոլոր դասընթացները: Դրանցից մի քանիսը կարող են առաջարկվել միայն որոշակի Ուսումնական Կենտրոններում: Որոշ դասընթացներ կարող են չպահանջվել որևէ ծրագրի համար, բայց ըստ անհրաժեշտության և դասախոսի առկայության դեպքում կարող են առաջարկվել որպես ընտրովի կամ նպատակային դասեր:

***Խումբ Ա. Աստվածաշունչ***

| | |
|---|---|
| BIB11 | Հին Ուխտի Ներածություն |
| BIB12 | Նոր Կտակարանի Ներածություն |
| BIB14 | Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ |
| BIB21 | Հնգամատյան |
| BIB22 | Սինոպտիկ Ավետարաններ |
| BIB23 | Պողոս Առաքյալի Թղթերը |
| BIB24 | Հին Ուխտի Մարգարեներ |

| | |
|---|---|
| BIB25 | Հովհաննես Առաքյալի Գրականությունը |
| BIB34 | Հին Ուխտի Պատմական Գրքերը |
| BIB42 | Սաղմոսներ և Իմաստության Գրականություն |
| BIB46 | Հատուկ Աստվածաշնչյան Դասընթացներ |
| BIB55 | Աստվածաշնչյան Հունարեն Լեզվի Ներածություն |

***Խումբ B. Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն***

| | |
|---|---|
| THE10 | Աստվածաբանական Կոնֆերանսներ |
| THE11 | Վարդապետության Ներածություն |
| THE13 | Սրբություն և Եկեղեցու Ինքնություն |
| THE211 | Քրիստոնեական Վարդապետություններ 1 |
| THE212 | Քրիստոնեական Վարդապետություններ 2 |
| THE22 | Նազովրեցու Եկեղեցու Պատմություն և Նրա Կառավարումը |
| THE23 | Եկեղեցու Պատմություն |
| THE24 | Եկեղեցու Պատմության և Աստվածաբանության Հատուկ Դասընթացներ |
| THE25 | Քրիստոնեական Էթիկա |
| THE31 | Ջոն Վեսլիի Աստվածաբանությունը |
| THE32 | Քրիստոնեական Ապոլոգետիկա |
| THE34 | Քրիստոնեական Մոտեցում Իսլամին |
| THE42 | Ժամանակակից Վեսլիական Սրբության Աստվածաբանությունը |

***Խումբ C. Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, Կոչում***

| | |
|---|---|
| MIS10 | Ուղղորդում կամ Մենթորինգ |
| MIS11 | Աստծո Առաքելությունը և Եկեղեցին |
| MIS12 | Կանչ և Անձնական Ծառայություն |
| MIS13 | Հոգևոր Ձևավորում |
| MIS14 | Ուղղորդման Ներածություն |
| MIS41 | Ծառայողի Բազմակողմանի Բարեկեցությունը |
| PAS11 | Քրիստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում |
| PAS21 | Քրիստոնեական Երկրպագություն |
| PAS22 | Եկեղեցու Զարգացումը |
| PAS23 | Հովվական Ծառայության Հատուկ Դասընթացներ |
| PRC21 | Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում |
| PRC23 | Քաղաքային Ծառայություն |
| PRC24 | Միջմշակութային Միսիաներ |

***Խումբ D. Ծառայողական Հմտություններ***

| | |
|---|---|
| MIN10 | Առաջնորդական Կոնֆերանսներ |
| MIN11 | Պրակտիկա |

MIN20 Եկեղեցական Երաժշտության Ներածություն
MIN22 Քարոզաբանություն
MIN23 Երիտասարդական Ծառայության Հիմունքները
MIN24 Հովվական Խնամք և Հոգաբարձություն
MIN25 Քրիստոնեական Առաջնորդություն
MIN26 Ինտերնատուրա
MIN27 Եկեղեցական Ծառայության Վերջնական Առարկան
MIN28 Եկեղեցական Ծառայության Հատուկ Դասընթաց
MIN290 Աստվածաբանական Մտորումների Ներածություն
MIN291 Աստվածաբանական Խորհրդածություններ Կյանքի և Ծառայության Վերաբերյալ
MIN30 Վերջնական Վերանայում
MIN47 Ամուսնության և Ընտանեական Ծառայության Հիմունքները

*Խումբ E. Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ*

ACP1000 EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն
ACP121 Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1
ACP122 Ակադեմիական Ունակությունների Զարգացում 2
ACP25 Հանրային Ելույթներ և Բանավոր Պատմվածքներ
GEN20 Փիլիսոփայության Ներածություն
GEN22 Համաշխարհային Կրոններ
GEN50 Հումանիտար Գիտությունների Վերաբերյալ Հատուկ Դասընթաց
SOC22 Մարդկային Աճ ու Զարգացում
SOC24 Միջանձնային Հաղորդակցություն
SOC31 Ընդհանուր Սոցիոլոգիա
SOC32 Սոցիալական Պրոբլեմների Ներածություն

# *VIII. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ*

*Խումբ A. Աստվածաշունչ*

**BIB11 Հին Ուխտի Ներածություն**
Այս դասընթացը ներկայացնում է Հին Ուխտի գրականության ներածությունը: Այն ուսումնասիրում է Հին Ուխտի գրքերի թեմաները, պատմությունը և գրական բնությունը և անդրադառնում դրանց պատգամների արդիականությանը ժամանակակից հասարակության համար:

Այս դասընթացը պահանջվող նախադրյալ դասընթացներ չունի:
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Երբ այս դասընթացն առաջարկվում է 6 ECTS-ով, ապա այն դասավանդվում է երկու մասով և Հին Ուխտի Ներածություն 1-ը նախապայման է Հին Ուխտի Ներածություն 2-ի համար:

**BIB12 Նոր Կտակարանի Ներածություն**
Այս դասընթացը ներկայացնում է Նոր Կտակարանի գրականության ներածությունը: Այն ուսումնասիրում է Նոր Կտակարանի գրքերի թեմաները, պատմական, սոցիալական և մշակութային նախադրյալները և գրական բնույթը և անդրադառնում Հիսուս Քրիստոսի վերաբերյալ նրանց վկայության արդիականությանը ժամանակակից հասարակության համար:

Այս դասընթացը պահանջվող նախադրյալ դասընթացներ չունի:

**BIB14 Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ**
Այս դասընթացը հիմք է հանդիսանում Աստվածաշնչի ուսումնասիրությունների համար: Այն նախատեսված է Աստծո Խոսքը Սուրբ Գրությունների միջոցով այսօր լսելու հասկացողություն և գնահատում զարգացնելու համար: Այն կենտրոնանալու է համապատասխան գործիքների և Աստվածաշնչի բացատրության գործընթացի ուսուցման վրա, հասկանալու մեկնաբանության սկզբունքները, որոնք հատուկ են Աստվածաշնչյան գրականության տարբեր տեսակներին և ներգրավում է տարբեր հարցեր և հերմենևտիկ խնդիրներ, որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես է Սուրբ Գիրքը

մեկնաբանվում եկեղեցում:

Այս դասընթացը նախապայման ունի կա՛մ Հին Ուխտի Ներածություն, կա՛մ Նոր Կտակարանի Ներածություն: Նախընտրելի է, որ աստվածաշնչյան ներածության երկու դասընթացներն էլ ավարտվեն այս դասընթացից առաջ:

**BIB21 Հնգամատյան**
Այս դասընթացը Հին Ուխտի առաջին հինգ գրքերի ուսումնասիրությունն է:Այն կենտրոնանում է Ծննդոցից մինչև Երկրորդ Օրինաց գրքերի պատմական զարգացման ընթացքի վրա, աստվածաբանական թեմաների վրա, որոնք բխում են այս նյութից և թե ինչպես է Թորան ձևավորում հրեա ժողովրդի ինքնությունը: Դասընթացը ներառում է նաև այս գրքերի ուսումնասիրության մեթոդների համառոտ ներածությունը:

Այս դասընթացի նախապայմաններն են՝ Հին Ուխտի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները:

**BIB22 Սինոպտիկ Ավետարաններ**
Այս դասընթացը առաջին երեք Ավետարանների ուսումնասիրությունն է և այն ուշադրություն է դարձնում դրանց համատեքստին, գրական կառուցվածքին և աստվածաբանական ուղերձին, ինչպես նաև դրանց նմանություններին և տարբերություններին: Դասընթացը կներկայացնի այս Ավետարանների էկզեգետիկ ուսումնասիրությունը, որը հիմնված կլինի Ավետարանների ժամանակակից թարգմանության վրա: Այս դասընթացը ընդլայնում է ուսանողների հիմնարար կրթությունը ներածական աստվածաշնչային թեմաներից և հնարավորություն է տալիս զարգացնելու էկզեգետիկ և հետազոտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են Աստվածաշնչի արդյունավետ ուսումնասիրության, քարոզչության և ծառայության համար: Այս գրքերը ուսումնասիրվում են այնքանով, որքանով դրանք կարևոր են հավատքի հանրության համար:

Այս դասընթացը որպես նախապայման ունի Նոր Կտակարանի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները:

**BIB23 Պողոս Առաքյալի Թղթերը**
Պողոսի կյանքի և նամակների ուսումնասիրության դասընթացը կկենտրոնանա և՛ Պողոսի անցյալի ուսումնասիրության վրա և՛ նրա

նամակների մի մասի հետևողական էքսեգետիկ ուսումնասիրության վրա: Այս դասընթացը հնարավորություն է տալիս զարգացնելու էկզեգետիկ և ցուցադրական հմտություններ, որոնք անհրաժեշտ են Աստվածաշնչի արդյունավետ ուսումնասիրության, քարոզչության և ծառայության համար: Այս թղթերը ուսումնասիրվում են այնքանով, որքանով դրանք կարևոր են հավատքի հանրության շինության համար:

Այս դասընթացը որպես նախապայման ունի Նոր Կտակարանի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները:

**BIB24 Հին Ուխտի Մարգարեները**

Այս դասընթացը ուսումնասիրում է Հին Ուխտի մարգարեների ուղերձը և համատեքստը: Նպատակն է ծանոթացնել ուսանողին ՀՈւ մարգարեության մեկնաբանության հիմնական սկզբունքներին, մարգարեների համատեքստին և նրանց ուղերձի ժամանակակից նշանակությանը: Հատուկ ուշադրություն կդարձվի մ.թ.ա. 8-րդ և 7-րդ դարի  մարգարեներին:

Այս դասընթացի նախապայմաններն են  Հին Ուխտի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները:

**BIB25 Հովհաննես Առաքյալի Գրականությունը**

Այս դասընթացը Հովհաննեսի Ավետարանի, 1, 2 և 3 Հովհաննեսի Թղթերի և Հայտնության գրքի ուսումնասիրությունն է: Ուշադրություն է դարձվելու դրանց համատեքստին, գրական կառուցվածքին, աստվածաբանական ուղերձին և ժամանակակից մեկնաբանությանը: Դասընթացը կենտրոնանալու է ժամանակակից թարգմանության վրա հիմնված տեքստերի ինդուկտիվ ուսումնասիրության վրա: Այս գրքերը ուսումնասիրվում են այնքանով, որքանով դրանք կարևոր են հավատքի հանրության համար:

Այս դասընթացը որպես նախապայման ունի Նոր Կտակարանի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները, ինչպես նաև նախընտրելի է անցնել Հին Ուխտի Ներածությունը:

**BIB34  Հին Ուխտի Պատմական Գրքերը**

Այս դասընթացը բաղկացած է Հին Ուխտի պատմողական գրականության ուսումնասիրությունից, որն ընդգրկում է Հեսուի, Դատավորաց ու   Թագավորաց գրքերը: Մասնավորապես,

կուսումնասիրվի Երկրորդ Օրինաց գրքի լեզվի և աստվածաբանության ձևերը հին Իսրայելի և Հուդայի պատմության պատմողական վերապատումների միջոցով:

Այս դասընթացի նախապայմաններն են՝  Հին Ուխտի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները, ինչպես նաև նախընտրելի է անցնել Հնգամատյան դասընթացը:

**BIB42 Սաղմոսներ ԵՎ Իմաստության Գրականություն**
Այս դասընթացը բաղկացած է Սաղմոսների և Հին Ուխտի իմաստության գրականության (Հոբ, Առակներ և Ժողովող) ուսումնասիրությունից, շեշտը դնելով այս ժանրերի գրական և աստվածաբանական հատկանիշների վրա:

Այս դասընթացի նախապայմաններն են՝  Հին Ուխտի Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները:

**BIB46   Հատուկ Աստվածաշնչյան Դասընթացներ**
Այս դասընթացը ուսումնասիրում է Աստվածաշնչից կոնկրետ գիրք կամ աստվածաշնչյան թեմա:

Հին  և Նոր Կտակարանների Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ դասընթացները այս դասընթացի նախապայմաններն  են:

**BIB55 Աստվածաշնչյան Հունարեն Լեզվի Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին տալիս է աստվածաշնչյան Հունարենի ֆունկցիոնալ գիտելիքներ:  Այն թույլ է տալիս ուսանողներին կարդալ հունարեն այբուբենը, բառարանում բառեր փնտրելու համար իմանալ հիմնական քերականական տերմինները, աշխատել աստվածաբանական բառարանների հետ, ավելի արդյունավետ օգտագործել Նոր Կտակարանի մեկնաբանությունները: Հիմնվելով բնօրինակ լեզվի վրա, օգտվել աստվածաշնչյան  էլեկտրոնային ծրագրերից տեքստային քննադատության և բնօրինակ հունարեն տեքստի իմաստի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար:

Սա աստվածաշնչյան առաջադեմ դասընթաց է  և որպես նախապայման ունի Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ և Նոր

Կտակարանի Ներածություն առարկաները:

*Խումբ B. Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն*

**THE10 Աստվածաբանական Կոնֆերանսներ**
Այս դասընթացը ներառում է համաժողովի մասնակցություն ծառայության մեջ գտնվող կամ նախապատրաստվող մարդկանց համար և հետագա գրավոր աշխատանք (արտացոլում/կիրառում):

Այս դասընթացը բաց է բոլոր ուսանողների համար և կախված գիտաժողովից կարող է ունենալ որոշակի նախադրյալներ:

**THE11 Վարդապետության Ներածություն**
Այս դասընթացը ուսումնասիրում է աստվածաբանական արտացոլման անհրաժեշտությունը քրիստոնեական համայնքում և անձնական կյանքում, ուսանողներին ծանոթացնում է աստվածաբանության դիսցիպլինան Վեսլիական-Արմինյուսական տեսանկյունից, նրա հիմնական տերմինաբանությանը և աստվածաբանության կազմակերպումը որպես ակադեմիական դիսցիպլինա:

Այս դասընթացը նախապայմաններ չունի, սակայն ցանկալի է անցնել սկզբնական 20 ECTS կրեդիտների շրջանակներում:

**THE13 Սրբություն և Եկեղեցու Ինքնություն**
Այս դասընթացը ուսումնասիրում է սրբության աստվածաշնչյան հայեցակարգը, քրիստոնեական կատարելության վարդապետությունը, ինչպես ուսուցանվել է Ջոն Վեսլիի կողմից 18-րդ դարում և ամբողջական սրբագործության վարդապետությունը, որն արտահայտված է Վեսլիական-Արմինյուսական ավանդույթով: Աստվածաշնչյան, աստվածաբանական և պատմական այս ուսումնասիրությունը կանդրադառնա այն հարցին, թե ինչպես պետք է Վեսլիական Սրբության դավանանքները արտահայտեն իրենց ինքնությունը ժամանակակից մշակույթում:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Վարդապետության Ներածություն առարկան:

**THE211 Քրիստոնեական Վարդապետություններ 1**
Այս դասընթացը Վեսլիական-Սրբության ավանդույթի տեսանկյունից, քրիստոնեական եկեղեցու հիմնական վարդապետությունների ուսումնասիրության երկու մասից բաղկացած շարքի մի մասն է: Այս կոնկրետ հատվածը կկենտրոնանա Աստծո վրա և այն, ինչ կարելի է իմանալ Նրա մասին որպես գոյության սկզբնակետ:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Վարդապետության Ներածություն և Ակադեմիական Ունակություններ 2 առարկան:

**THE212 Քրիստոնեական Վարդապետություններ 2**
Այս դասընթացը Վեսլիական-Սրբության ավանդույթի տեսանկյունից քրիստոնեական եկեղեցու հիմնական վարդապետությունների ուսումնասիրության երկու մասից բաղկացած շարքի երկրորդ մասն է: Այս կոնկրետ մասը, կկենտրոնանա Աստծո և մարդկության փոխհարաբերություններին վերաբերող վարդապետությունների վրա:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Վարդապետության Ներածություն և Ակադեմիական Ունակություններ 2 առարկան: Նախընտրելի է, բայց չի պահանջվում, որ ուսանողները նախ վերցնեն Քրիստոնեական Վարդապետություններ 1-ը:

**THE22 Նազովրեցու Եկեղեցու Պատմություն ԵՎ Նրա Կառավարումը**
Այս դասընթացը ծանոթացնում է Նազովրեցու Եկեղեցու պատմական զարգացման, ինքնության, կառավարման և քաղաքական կարգի ներածությունը: Ուսանողները կուսումնասիրեն դավանանքի ծագումը Վեսլիական-Սրբության ավանդույթի շրջանակներում, դրա վարդապետական և միսիոներական հիմքերը, ինչպես նաև դրա կազմակերպչական կառույցների գործունեությունը տեղական և շրջանային մակարդակներում՝ այսօրվա առաքելությունը կատարելու համար:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Սրբություն և Եկեղեցու Ինքնություն և Եկեղեցու Պատմություն առարկաները:

**THE23  Եկեղեցու Պատմություն**
Այս դասընթացը ներկայացնում է Եկեղեցու պատմության և նրա աստվածաբանության ներածությունը, սկսած վաղ շրջանից մինչև

մեր օրերը, և ինչպես է այն արտահայտված արևմտյան և արևելյան քրիստոնեության մեջ:

Այս դասընթացը նախադրյալներ չունի: Կախված դասընթացի վայրից, եկեղեցու պատմության որոշ ժամանակաշրջաններ ավելի շատ կընդգծվեն, քան մյուսները:

**THE24 Եկեղեցու Պատմության և Աստվածաբանության Հատուկ Դասընթացներ**

Այս դասընթացը ուսումնասիրում է որոշակի քրիստոնեական վարդապետություն կամ եկեղեցու պատմության որոշակի ժամանակաշրջան:

Սա խորացված աստվածաբանական դասընթաց է և որպես նախապայման, ունի Քրիստոնեական Վարդապետություններ 1 և 2 -ը և/կամ Եկեղեցու Պատմություն դասընթացները:

**THE25 Քրիստոնեական Էթիկա**

Այս դասընթացի նպատակն է օգնել ուսանողներին ձևավորել անձնական մոտեցում էթիկայի և էթիկական հարցերի նկատմամբ, որը հավատարիմ է Աստվածաշնչի վկայությանը և Եկեղեցու վարդապետություններին, որոնք արտահայտված են Վեսլիական ավանդության մեջ: Այսպիսով, դասընթացը կքննարկի Աստվածաշնչի էթիկական ուսմունքները, կվերլուծի աստվածաբանության և էթիկայի հարաբերությունները և կուսումնասիրի հիմնական էթիկական համակարգերի ուսմունքները: Համատեքստին համապատասխան, էթիկական հարցերը մանրամասն կուսումնասիրվեն:

Այս դասընթացի նախընտրելի նախադրյալներն են՝ Քրիստոնեական Վարդապետություններ 2-ը, Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքները և Փիլիսոփայության Ներածություն առարկաները:

**THE31 Ջոն Վեսլիի Աստվածաբանությունը**

Այս դասընթացը Ջոն Վեսլիի, նրա հոգևոր ճանապարհորդության և աստվածաբանական մտածողության զարգացման պատմական ուսումնասիրությունն է: Կուսումնասիրվեն նրա աստվածաբանության հիմնական թեմաները, հատուկ շեշտադրելով քրիստոնեական կատարելության մասին նրա հռչակումը:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Քրիստոնեական Վարդապետություններ 1-ը, Քրիստոնեական Վարդապետություններ 2-ը և Եկեղեցու Պատմություն առարկաները:

**THE32 Քրիստոնեական Ապոլոգետիկա**
Այս դասընթացը ուսումնասիրում է ապոլոգետիկայի աստվածաբանական դիսցիպլինան և ապոլոգետիկայի տարբեր հարցեր, որոնք մարտահրավեր են նետում ժամանակակից քրիստոնեությանը, ինչպես նաև քրիստոնեական արձագանքները, որպես աջակցություն եկեղեցու միսիոներական առաջադրանքի:

Այս դասընթացը որպես նախապայման ունի Քրիստոնեական Վարդապետություններ 1-ը, Քրիստոնեական Վարդապետություններ 2-ը և Փիլիսոփայության Ներածություն առարկաները:

**THE34 Քրիստոնեական Մոտեցում Իսլամին**
Այս դասընթացը տրամադրում է համապարփակ ըմբռնում և ներածություն իսլամի հավատալիքների և գործելակերպի վերաբերյալ,հատուկ շեշտադրելով մուսուլմաններին քրիստոնեական հավատքը բացատրելու և ոչ մահմեդական մեծամասնության մշակույթներում մուսուլմանական համայնքներին ծառայելու հիմքերը դնելու վրա:

Այս դասընթացն ունի Վարդապետության Ներածություն, Քրիստոնեական Վարդապետություններ 1 և 2-ը որպես նախադրյալներ, իսկ Քրիստոնեական Ապոլոգետիկան և Համաշխարհային Կրոնները որպես նախընտրելի նախադրյալ:

**THE42 Ժամանակակից Վեսլիական Սրբության Աստվածաբանությունը**
Այս դասընթացը ուսումնասիրում է ժամանակակից Վեսլիական-Սրբություն աստվածաբանական քննարկումների զարգացումները, հատուկ ուշադրություն դարձնելով սրբության վարդապետությանը:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Քրիստոնեական Վարդապետություններ1,2, Սրբություն և Եկեղեցու Ինքնություն և Ջոն Վեսլիի Աստվածաբանությունը առարկաները:

*Խումբ C. Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, Կոչում*

**MIS10 Ուղղորդում կամ Մենթորինգ**
Այս գործունեությունը նախատեսված է օգնելու ուսանողներին իրենց ուսման և անձնական զարգացման մեջ: Մենթորությունը կարող է ներառել գործունեության լայն շրջանակ, որոնք բոլորն ուղղված են ուսանողների զարգացմանն ուղղորդելուն, լինի դա ակադեմիական խորհրդատվության, կորպորատիվ երկրպագության, հոգևոր ուղղության կամ նրանց ուսման հետ կապված համապատասխան հարցերի վերաբերյալ փոքր խմբերում քննարկումների միջոցով:

Մենթորությունը բոլոր ծրագրերի պահանջն է: Ուսումնական ծրագրի յուրաքանչյուր 30 ECTS-ի համար պետք է հավաքել նվազագույնը 0,5 մենթորական ECTS: Առաջին մենթորական դասընթացը պետք է անցկացվի EuNC-ում ուսանողի ուսումնառության սկզբում:

**MIS11 Աստծո Միսիան ԵՎ Եկեղեցին**
Այս դասընթացը ներածական դասընթաց է, որը ուսանողներին բացահայտում է ծառայության մասին միսիոներական տեսակետը: Աստծո առաքելության (M*issio Dei*) աստվածաշնչյան-աստվածաբանական ուսումնասիրության միջոցով ուսանողները կուսումնասիրեն եկեղեցու էական էությունը, որպես Քրիստոսի մարմին աշխարհում, որը կոչված է գոյություն ունենալ Աստծո հետ համագործակցելու և երկրի վրա Նրա առաքելությունը կատարելու համար:

Այս դասընթացը նախապայմաններ չունի, սակայն ցանկալի է անցնել սկզբնական 20 ECTS կրեդիտների շրջանակներում:

**MIS12 Կանչ և Անձնական Ծառայություն**
Կանչ և անձնական ծառայությունը ներածական մակարդակի դասընթաց է, որը ուսանողներին բացահայտում է անձնական կոչման հասկացությունները և այն կապված է «Աստծո Առաքելությունը և Եկեղեցին» դասընթացի ներկայացված նյութի համատեքստի հետ: Այս դասընթացը ուսումնասիրում է, թե ինչ է նշանակում գտնել ծառայության անձնական տեղ և նշանակություն Աստծո ծրագրում և Նրա Թագավորության մեջ, օգտագործելով սեփական պարգևները, կարողությունները և ժառանգությունը: Կուսումնասիրվեն կոչման

աստվածաբանական և պատմական հասկացությունները, բայց այս դասընթացը նաև մեծապես արտացոլում է սեփական ինքնությունը և փորձը,  ճանաչելու սեփական եզակի պոտենցիալ ներդրումը Աստծո և Եկեղեցու առաքելության մեջ:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկան:

**MIS13 Հոգևոր  Ձևավորում**
Այս դասընթացի նպատակն է, թե ինչպես են փոխանցվում շնորհքի միջոցները և  և ուսանողների կյանքում հաստատել հոգևոր դիսցիպլինաներ, որոնք պատրաստվում են ծառայել այս կոտրված աշխարհում, որը սուրբ վերափոխման կարիք ունի: Ժամանակը հատկացված է դասական հոգևոր դիսցիպլինաներին, և դասընթացի ընթացքում հնարավորություններ են ընձեռնվում ձեռք բերված գիտելիքները կիրառել ինչպես անձնական, այնպես էլ համայնքային հոգևոր ձևավորման մեջ:

Այս դասընթացը որպես նախապայման,  ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկան:

**MIS14 Ուղղորդման Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է մենթորության հայեցակարգին, և ծառայում է որպես նախապատրաստություն EuNC-ի մենթորության ուսումնական դասընթացին:

Այս դասընթացը նախադրյալներ չունի :

**MIS41 Ծառայողի Բազմակողմանի Բարեկեցությունը**
Այս դասընթացը ուսումնասիրում է տարբեր մարտահրավերներ, որոնց կհանդիպի ծառայողը իր ծառայության ընթացքում, և ուսումնասիրում է ծառայության մեջ հաջողակ մնալու ուղիները: Այն ձգտում է հիմնվել այն սկզբունքների և կարգապահությունների վրա, որոնք սովորել և կիրառվել են ուսանողների կյանքում, որոնք պատրաստվում են ծառայել կոտրված աշխարհում, որը սուրբ վերափոխման կարիք ունի:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Կանչ և Անձնական Ծառայություն և Հոգևոր Ձևավորում  առարկաները:

**PAS11 Քրիստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում**
Սա ներածական դասընթաց է, որն ուսումնասիրում է Քրիստոնեական Կրթության (Աշակերտության) տեղը, նշանակությունը և դերը տեղական եկեղեցու ընդհանուր ծառայության համատեքստում և կենտրոնանում է բոլոր տարիքի հավատացյալների հավատքի զարգացման վրա: Դասընթացի ընթացքում կուսումնասիրվեն և կկիրառվեն աստվածաբանական հիմունքներ, ինչպես նաև կրթական սկզբունքներ և պրակտիկա:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, Աստվածաշնչի Ուսումնասիրություն Հիմունքներ և Մարդկային Աճ ու Զարգացում առարկաները:

**PAS21 Քրիստոնեական Երկրպագություն**
Այս դասընթացի նպատակն է, օգնել ուսանողներին զարգացնել երկրպագության աստվածաբանությունը, և հստակ պատկերացում ունենալ հավատացյալի ամենօրյա պաշտամունքային ապրելակերպի և համայնքի շաբաթական երկրպագության գործունեության միջև: Հատուկ ուշադրություն է դարձվում պաշտամունքի աստվածաշնչյան հիմքին, պաշտամունքի և պատարագի պատմական զարգացմանը, սպասավորի հոգևոր կյանքին, պաշտամունքի տարբեր տարրերին և պաշտամունքի մոդելների ուսումնասիրությանը, որոնք տեղին են այսօրվա Եկեղեցու համար:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկան:

**PAS22  Եկեղեցու Զարգացումը**
Այս դասընթացը ուսումնասիրում է, թե ինչպես կարող է տեղական համայնքը կազմակերպել իր աճը որպես միսիոներական եկեղեցի և մշակել համապատասխան ծառայություններ եկեղեցուց դուրս գտնվող մարդկանց հասնելու, և նրա անդամներին հովվելու համար:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում, Քրիստոնեական  Առաջնորդություն առարկաները:

**PAS23 Հովվական Ծառայության Հատուկ Դասընթացներ**
Այս դասընթացն ուսումնասիրում է հովվական ծառայության մի կոնկրետ ասպեկտ, որը վերաբերում է ուսանողի համատեքստին:

Այս դասընթացը որպես նախապայմաններ է ներառում Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, Կոչում և Անձնական Ծառայությունը կամ Քրիստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում:

**PRC21 Ավետարանչություն և Եկեղեցու Հաստատում**
Այս դասընթացը ուսումնասիրում է, թե ինչպես կարելի է Ավետարանը հասցնել հետմոդեռն/կոմունիստական և հետքրիստոնեական միջավայրերում ապրող մարդկանց, և ինչպես կարելի է միսիոներական եկեղեցիներ հիմնել: Կուսումնասիրվեն և կգնահատվեն Ավետարանը մարդկանց մեջ տարածելու, և հավատքի համայնքներ ստեղծելու տարբեր ուղիներ: Այս համատեքստում, աստվածաշնչյան միսիոլոգիական շեշտադրումը, ցանկություն կզարգացնի և կխրախուսի յուրաքանչյուր ուսանողի, քրիստոնեական հավատքի համայնքներ ստեղծելու միջոցով, հասնելու իրենց սերնդին և ուրիշներին:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկան իսկ  Փիլիսոփայության Ներածություն առարկան ցանկալի է:

**PRC23  Քաղաքային Ծառայություն**
Այս դասընթացը կենտրոնանալու է քաղաքի, նրա մարդկանց և նրանց առջև ծառացած մարտահրավերների վրա, և կուսումնասիրի քաղաքում առաքելության հնարավորությունները:   Այն կուսումնասիրի Աստծո կոչը եկեղեցուն, վկա լինելու Քրիստոսի և Աստծո Թագավորության համար քաղաքում և այն մեթոդներն ու հեռանկարները, որոնք կարող են նպաստել այնտեղ ապրող մարդկանց առողջ ծառայությանը:

Այս դասընթացը որպես նախապայման ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկան:

**PRC24 Միջմշակութային Միսիաներ**
Այս դասընթացը ուսումնասիրում է միջմշակութային առաքելությունների կարևորությունը ինչպես արտերկրում, այնպես էլ մեր համայնքում:  Այն ուսանողներին կտրամադրի

միջմշակութային առաքելություններին առնչվող կարևոր տերմինների և գործելակերպերի ըմբռնում և իրազեկում, ինչպես նաև կամրապնդի ուրիշներին ծառայելու և Քրիստոսի մասին սովորեցնելու նրանց կոչումը: Հաղորդակցման մշակութային համատեքստը, նույնպես տեսության/գործնական կիրառման նշանակալի ոլորտ է:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի  Աստծո Առաքելությունը և Եկեղեցին,  և Միջանձնային Հաղորդակցություն  առարկաները:

*Խումբ D. Ծառայողական Հմտություններ*

**MIN10 Առաջնորդական Կոնֆերանսներ**
Այս դասընթացը ներառում է համաժողովի մասնակցություն ծառայության մեջ գտնվող, կամ նախապատրաստվող մարդկանց համար և հետագա գրավոր աշխատանք (արտացոլում/կիրառում):

Այս դասընթացը բաց է բոլոր ուսանողների համար և կախված գիտաժողովից կարող է ունենալ որոշակի նախադրյալներ:

**MIN11 Պրակտիկա**
Այս պրակտիկ դասընթացը ուսանողներին թույլ է տալիս ձեռք բերել վերահսկվող  գործնական փորձ, մասնակցելով որպես անհատ կամ ուսման ընթացքում միանալ իրենց տեղական եկեղեցու կամ համատեքստի թիմի շարունակական ծառայությանը: Այս դասընթացն օգնում է իրականացնել ծառայությունների վրա հիմնված կրթական գործողությունները, որոնք ներառված են ՆԵՔ-ի բոլոր ծրագրերում: Առաջարկվում է, որ ուսանողներն անցնեն այս դասընթացը իրենց առաջին 60 ECTS-ի ընթացքում և Ինտերնատուրա դասընթացի անցնելուց առաջ:

**MIN20 Եկեղեցական Երաժշտության Ներածություն**
Այս դասընթացը տրամադրում է հիմնական և գործնական ներածություն եկեղեցու անձնակազմի, երաժշտական գործիքների և եկեղեցական երաժշտության (եկեղեցաական երգեցողություն, օրհներգություն, գործիքային երաժշտություն, նվագակցում, երգչախումբ) հասկացություններին: Աշակերտը ձեռք կբերի

երաժշտական ստեղծագործության տարրական գիտելիքներ, որոնք կարող են օգնել նրան տարբեր իրավիճակներում, այդ թվում նաև պաշտամունքի պատրաստվելու համար: Դասընթացը կենտրոնանում է պատարագի հմտությունների վրա, ինչպիսիք են երկրպագության համար հարմար երգերի ընտրությունը, եկեղեցական երգեցողությունը, քրիստոնեական երգերի երգացանկի իմացությունը և լավ եկեղեցական երաժշտության հիմնական պարամետրերը:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Քրիստոնեական Երկրպագություն առարկան:

**MIN22 Քարոզաբանություն**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է քարոզի կառուցման և մատուցման հիմունքներին, կենտրոնանալով հատկապես բացատրական քարոզների վրա:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Հին և Նոր Կտակարանների Ներածությունը և Աստվածաշնչի Ուսումնասիրության Հիմունքներ դասընթացները, նաև ցանկալի է, որ ուսանողը անցած լինի Քրիստոնեական Երկրպագություն, Միջանձնային Հաղորդակցություններ և Աստծո Առաքելությունը և Եկեղեցին առարկաները:

**MIN23 Երիտասարդական Ծառայության Հիմունքները**
Այս դասընթացը երիտասարդական ծառայության աստվածաբանական, սոցիոլոգիական և կրթական տարբեր ասպեկտների ուսումնասիրություն է, և այն շեշտադրում է երիտասարդության վրա մշակութային ձևավորման ազդեցությունների ուսումնասիրությունը: Ուսանողներին կներկայացվի երիտասարդական ծառայության տարբեր մոդելների համապարփակ պատկերացում, միաժամանակ մշակելով իրենց հատուկ մոտեցումը երիտասարդական ծառայության պրակտիկային:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Քրիսստոնեական Կրթությունը Տեղական Համայնքում և Մարդկային Աճ ու Զարգացում առարկաները:

**MIN24 Հովվական Խնամաք և Հոգաբարձություն**

Դասընթացը ուսումնասիրում է հովվական ծառայության տեսությունը և լավագույն պրակտիկան, որպես համայնքին առաջնորդություն, աջակցություն և հովվական խորհրդատվություն տրամադրելու ինտեգրված մոտեցում: Այն ընդգծում է մարդկանց աճը հոգալու և անձնական/միջանձնային հարցերն ու ճգնաժամերը լուծելու հիմնական հմտություններն ու մեթոդները:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Մարդկային Աճ ու Զարգացում և Միջանձնային Հաղորդակցություն առարկաները:

**MIN25 Քրիստոնեական Առաջնորդություն**

Այս դասընթացը ուսանողին ծանոթացնում է տեղական համայնքում առաջնորդության և կառավարման տեսությանը: Դասընթացը մարտահրավեր է նետում յուրաքանչյուր ուսանողի, դառնալու Քրիստոսանման առաջնորդ/հովիվ տեղական եկեղեցական միջավայրում և ղեկավարել այն ըստ իր պարգևների:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Աստծո Առաքելությունը և Եկեղեցին, Կանչ և Անձնական Ծառայություն և Միչանձնային Հարաբերություններ առարկաները:

**MIN26 Ինտերնատուրա**

Այս պրակտիկ դասընթացը, մենթորական ծառայության համատեքստում նախատեսված է ուսանողներին ավելի ինտենսիվ և կենտրոնացված ուսուցման հնարավորություն տրամադրել: Հիմնվելով իրենց հմտությունների և հետաքրքրությունների վրա, ուսանողները կխորացնեն իրենց մասնագիտության ըմբռնումը և իրենց վրա կվերցնեն այն պարտականությունները, որոնք դա պահանջում է:
Ինտերնատուրան անցկացվում է ուսանողի ուսման երկրորդ 60 ECTS-ի ընթացքում:

**MIN27 Եկեղեցական Ծառայության Վերջնական Առարկան**

Այս դասընթացը նպատակ ունի խթանել տեղական եկեղեցական ծառայության Դիպլոմային ծրագրի դասընթացների տարբեր բովանդակության ինտեգրումը: Այն նաև նախատեսված է ուսանողի ինքնավերլուծությունը խթանելու և ծառայության հանդեպ նրա ընդունակությունները գնահատելու համար:

Արդյունավետ ինտեգրումն ապահովելու համար Ծառայության Ինտեգրումը պետք է անցկացվի վերջին 15 ECTS-ների ընթացքում՝ բոլոր հիմնական աստվածաբանության, պատմության և միսիոներական դասընթացներն ավարտելուց հետո:

**MIN28 Եկեղեցական Ծառայության Հատուկ Դասընթաց**
Այս դասընթացը ուսումնասիրում է հատուկ աստվածաբանական թեմաներ, որոնք վերաբերում են քրիստոնեական ծառայությանը կամ հատուկ գործնական խնդիրներին, որոնց ծառայողները բախվում են ծառայության ընթացքում:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Պրակտիկան և/կամ Ինտերնատուրան:

**MIN290 Աստվածաբանական Մտորումների Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է աստվածաբանական արտացոլման դիսցիպլինան, ուսումնասիրելով անհատական և համայնքային փորձառությունները, կրոնական ժառանգության իմաստության և Քրիստոնեական համայնքում և անձնական կյանքում, աստվածաբանական արտացոլման անհրաժեշտության հետ: Դասընթացի բնույթն այնպիսին է, որ աստվածաբանական մտորումների գործընթացը ներկառուցված է ուսանողի բովանդակության, իրավասության, բնավորության և համատեքստի զարգացման մեջ ամբողջ դասընթացի ընթացքում, ուստի ուսանողները կանդրադառնան գործնական և բովանդակային ուղղվածության դասընթացների միջոցով ձեռք բերված պրակտիկայի և գիտելիքների վրա:

Այս ներածական դասընթացը չունի նախադրյալներ և ուսանողը կարող է նրան մասնակցել միայն մեկ անգամ: Ուսանողները խրախուսվում են այս դասընթացն անցնելուց անմիջապես հետո, (եթե հնարավոր է նույն ուսումնական տարում) անցնել Աստվածաբանական Մտորումների պրակտիկայի դասընթաց:

**MIN291 Աստվածաբանական Խորհրդածություններ Կյանքի և Ծառայության Վերաբերյալ**
Այս դասընթացը ուսանողներին պրակտիկ հնարավորություն է տալիս զբաղվել աստվածաբանական մտորումներով, ուսումնասիրելով անձնական և համայնքային փորձառությունը, իմաստությամբ

քննարկելով կրոնական ժառանգությունը և անձնական ու Քրիստոնեական համայնքի կյանքում աստվածաբանական մտորումների անհարաժեշտությունը: Դասընթացի բնույթն այնպիսին է, որ աստվածաբանական մտորումների գործընթացը ներառված է ուսանողի զարգացման մեջ` բովանդակությամբ, իրավասությամբ, բնավորությամբ և համատեքստում, ամբողջ ուսումնասիրության ընթացքում: Այս կերպ ուսանողները կմտածեն գործնական և առարկայական դասընթացների միջոցով ձեռք բերված պրակտիկայի և գիտելիքների վերաբերյալ:
Ուսանողներին խրախուսվում է ուսման ընթացքում մի քանի անգամ հաճախել այս դասընթացը, հետևաբար այս դասընթացը որպես նախապայման ունի տարբեր բովանդակության դասընթացներ, կախված այն բանից, թե երբ է անցնում գործնական դասընթացը: Մինչ ուսանողն առաջին անգամ կսկսի այս դասընթացը, նրանից պահանջվում է անցնել «Աստվածաբանական մտորումների ներածություն» դասընթացը:

**MIN30 Վերջնական Վերանայում**
Համառոտ ակնարկը նպատակ ունի օգնել ուսանողներին սինթեզել իրենց դասընթացի, հոգևոր աճի և պրակտիկայի միջոցով ստացած տեղեկատվությունը, որպեսզի իրենց համատեքստում դրանք ավելի արդյունավետ կերպով կիրառեն իրենց կյանքի և ծառայության մեջ:

Այս դասընթացը Գործնական Աստվածաբանության Առաջատար Դիպլոմի ծրագրի ավարտական դասընթաց է, և կանցկացվի վերջին 15 ECTS կրեդիտների ընթացքում:

**MIN47 Ամուսնության և Ընտանեկան Ծառայության Հիմունքները**
Քրիստոնեական տեսանկյունից, ամուսնության և ընտանեկան հարաբերությունների դինամիկան գնահատելու համար, դասընթացը տրամադրում է աստվածաշնչյան և սոցիոլոգիական հիմք: Այն ուսանողին հիմք է տալիս ծառայելու և խորհրդատվություն կատարելու ամուսնացած զույգերին և ծնողներին, ինչպես նաև ամուսնության նախապատրաստվող մարդկանց:

Այս դասընթացը որպես նախապայման ունի Հովվական Խնամք ու Հոգաբարձություն և Մարդկային Աճ ու Զարգացում առարկաները:

*Խումբ E. Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ*

**ACP1000 EuNC-ի Կրթական Ծրագրի Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, EuNC-ում դասընթացներ անցնելու համար:

EuNC-ի կողմնորոշումը, ընդունելության պարտադիր դասընթաց է բոլոր ուսանողների համար և պետք է անցկացվի ցանկացած այլ դասընթացից առաջ:

**ACP121 Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է EuNC-ում հաջող ակադեմիական առաջադիմության համար անհրաժեշտ հիմնական հմտություններին: Դասընթացը զարգացնում է դատողության և ռեֆլեքսիվ մտածողության հիմնական հմտությունները և սովորեցնում ուսանողներին, թե ինչպես հստակ արտահայտվել և երկխոսել ուրիշների հետ. այն ներկայացնում է գրավոր աշխատանքի տարբեր տեսակներ EuNC-ում և ծառայության համատեքստում, ինչպես նաև ուսանողներին տրամադրում է էսսեներ գրելու հիմնարար հմտություններ:

Այս դասընթացը պետք է առաջարկվի նախնական 15 ECTS-ի շրջանակներում, որը ուսանողներն անցնում են EuNC-ում, նախընտրելի է ACP1000-ից անմիջապես հետո:

**ACP122 Ակադեմիական Ունակությունների Զարգացում 2**
Այս դասընթացի նպատակն է զարգացնել քննադատական մտածողության հմտությունները և ուսանողներին տրամադրել հետազոտական հիմնարար հմտություններ:

Այս դասընթացը որպես նախապայման, ունի Ակադեմիական Հմտություններ 1-ը և պետք է ընդունվի նախնական 45 ECTS-ի շրջանակներում, որը ուսանողները ստանում են EuNC-ում:

**ACP25 Հանրային Ելույթներ և Բանավոր Պատմվածքներ**

Այս դասընթացը նպատակ ունի զարգացնելու հանրային խոսքի

հմտությունները և օգնել ուսանողներին գտնել իրենց սեփական ձայնը, ինչպես նաև հաստատել վստահելիություն և զարգացնել ինքնավստահություն՝ որպես բանախոս: Հիմնական ուշադրությունը խոսքի պատրաստման, կազմակերպման և խոսքի մատուցման վրա է լրացուցիչ բաղադրիչներով, որոնք ներառում են լսարանի վերլուծությունը, էթիկական խնդիրները և պատմություն պատմելու տեխնիկայի ներածությունը: Ուսանողները կկիրառեն բովանդակությունը և կբարելավեն իրենց հմտությունները դասընթացի ընթացքում, հանդես գալով մի շարք ելույթներով:

Այս դասընթացը անցնելու համար պահանջվում է Ակադեմիական Ունակությունների Զարգացում 1-ը և Միջանձնային Հաղորդակցություն առարկաները:

**GEN20 Փիլիսոփայության Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է Եվրոպական փիլիսոփայության հիմնական մտքի դպրոցներին, ինչպես նաև այդ մտածողների կողմից արծարծված ամենակարևոր թեմաներին/հասկացություններին: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի քրիստոնեական աստվածաբանության հետ փոխազդեցությանը և ժամանակակից արդիական թեմաներին, այդպիսով ուսանողներին կպատրաստի ավելի լավ հասկանալու, թե ինչպես են մարդիկ իրենց համատեքստում մտածում և պատկերացնում աշխարհը:

Այս դասընթացը կարող է ընդունվել միայն սկզբնական 15 ECTS-ից հետո:

**GEN22 Համաշխարհային Կրոններ**
Դասընթացը ուսումնասիրում է մի քանի հիմնական համաշխարհային կրոններ (բացի քրիստոնեությունից), գաղափարախոսություններ և ժողովրդական (ավանդական) կրոններ: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի այն համաշխարհային կրոնների վրա, որոնք ազդեցություն ունեն տեղական համատեքստում: Դասընթացը ուսումնասիրում է նրանց հիմնադիրներին ու պատմությունը, սուրբ գրությունները, հավատալիքներն ու ծեսերը, նպատակ ունենալով հասկանալու և զարգացնելու նրանց հանդեպ հարգանքը:

Այս դասընթացը նախադրյալներ չունի:

**GEN50 Հումանիտար Գիտությունների Վերաբերյալ Հատուկ Դասընթաց**

Այս դասընթացն անդրադառնում է հումանիտար գիտությունների ոլորտին առնչվող թեմաներին, որոնք ուղղված են կոնկրետ խնդիրների խորացմանը, ավելի լավ հասկանալու համար հասարակությանը և անհատներին, որոնց հետ ուսանողները կներգրավվեն ծառայողական ձևով:
Այս դասընթացը չունի նախադրյալներ, կախված դասընթացի թեմայից Խմբի Ղեկավարը կարող է ուսուցչի հետ երկխոսության միջոցով դասընթացի այլ  պահանջներ դնել:

**SOC22 Մարդկային Աճ ու Զարգացում**
Այս դասընթացը զարգացման հոգեբանության ներածություն է: Այս դասընթացի նպատակն է  կյանքի ցիկլերի միջոցով ուսանողներին ծանոթացնել մարդու զարգացման հետ:  Զարգացման հեռանկարի արժեքը կընդգծվի, որպես մարդու վարքագիծը ուսումնասիրելու, մարդու ֆիզիկական զարգացումը, ճանաչողական, սոցիալական և անձնական համատեքստերի միջոցով դիտարկելու օգտակար միջոց: Կընդգծվի նաև ընտանիքի, հասակակիցների, լրատվամիջոցների, եկեղեցու և դպրոցի դերը:

Այս դասընթացը նախադրյալներ չունի:

**SOC24 Միջանձնային Հաղորդակցություն**
Այս դասընթացը վերաբերում է միջանձնային հաղորդակցության տեսության և պրակտիկայի հիմնական տարրերին: Շեշտը դրվում է ծառայության մեջ բովանդակալից հարաբերությունների և փոխգործակցության համար հաղորդակցման ռազմավարությունների առավելությունների վրա:

Այս դասընթացը նախադրյալներ չունի:

**SOC31 Ընդհանուր Սոցիոլոգիա**
Այս դասընթացը սոցիոլոգիայի ներածական դասընթաց է: Նա շարադրում է դրա հիմնական տեսական պարադիգմաները՝ ընդգծելով վերլուծության համար օգտակար հիմնական կատեգորիաները, ինչպիսիք են՝ մշակույթը, կառուցվածքը և իշխանությունը:  Այն նաև ուսումնասիրում է ուսանողների համատեքստին առավել համապատասխան կոնցեպցիաններ,

հնարավորություն տալով նրանց ավելի խորը պատկերացում կազմել հասարակության մասին, որտեղ նրանք զարգացնում են իրենց ծառայությունը:

Այս դասընթացը նախադրյալներ չունի։

**SOC32 Սոցիալական Պրոբլեմների Ներածություն**
Այս դասընթացը ուսանողներին ծանոթացնում է արդի սոցիալական խնդիրների հետ, որոնց կարող է հանդիպել քրիստոնեական եկեղեցին: Այն նաև նպատակ ունի օգնել նրանց հասկանալ սոցիալական խնդիրները տեսական և գործնական տեսանկյուններից և դիտարկել Վեսլիական-Արմինյուսական տարբեր արձագանքները իրենց տեղական համատեքստում:

Այս դասընթացը անցնելու համար, պահանջվում է  Ընդհանուր Սոցիոլոգիա դասընթացը, ցանկալի է նաև  անցնել Աստծո Առաքելությունը և Եկեղեցին և Մարդկային Աճ ու Զարգացում առարկաները:

# IX. ՔՈԼԵՋԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

## Ա. EuNC-ի ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄ

European Nazarene College-ը գործում է որպես մեկ ֆակուլտետ, որը սպասարկում է բազմաթիվ ուսումնական կենտրոններ: Մեր ֆակուլտետի անդամները ներկայացնում են տարբեր մշակութային, լեզվական և կրթական միջավայրեր, և միավորված են իրենց նվիրվածությամբ Քրիստոսանման ծառայությանը, ակադեմիական գերազանցությանը և ուսանողների խորհրդատվությանը, ինչպես նաև EuNC-ի առաքելությանը: Մեր ֆակուլտետը տարբեր երկրներում ապրող և ծառայող գործընկերների ցանց է:

EuNC-ի դասախոսները ի սկզբանե հրավիրվում են դասավանդելու EuNC-ի Ուսումնական Կենտրոնի կողմից: EuNC-ի բոլոր դասախոսները պետք է ունենան առնվազն մագիստրոսի աստիճան և հաստատված լինեն ստանդարտացված գործընթացով, որը ապահովում է Վեսլիական աստվածաբանական համապատասխանությունը և ուսանողական ձևավորման նկատմամբ նվիրվածությունը: Բոլոր նոր հաստատված դասախոսները պետք է նաև ավարտեն “Դասախոսական Կազմի Կողմնորոշման Դասընթացը”, որը պարտադիր է առաջին դասընթացը դասավանդելուց առաջ:

## Բ. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

Գաղտնիության և անվտանգության նկատառումներից ելնելով դասախոսական կազմի որոշ անդամներ ներառված չեն հետևյալ ցանկում:

Ալ Հալասա Մավիյա, M.A. (Մուտհա  Համալսարան, Հորդանան)

Ալ-Մաղանաթ Վալիդ, M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Ալմեյդա Ֆերնանդո, M.A., M.B.A., Ed.D. (Թրեվեքա Նազովրեցու Համալսարան)

Ալմեյդա Լիլիանա, B.A. (Նոր Համալսարան Լիսաբոն,  Պորտուգալիա)

Առնոլդ, Կլաուս, M.Div., Ph.D. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Արծրունյան Աննա, M.A. (Մոնթե Մելքոնյանի Անվան Համալսարան, Հայաստան)

Բալդեոն Տիքս, M.A., D.Min. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ )

Բատրուա ֆիլիպ, M.A. (Փարիզի Համալսարան, Ֆրանսիա)

Բաում  Տանյա, B.A. (Կոլումբիա Միջազգային Համալսարան, ԱՄՆ)

Բեյլեր, Սթիվեն, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Բիսկեգլիա Կարմելա Լուսիա, M.A. (Թուրինի Համալսարան, Իտալիա)

Բիթի, Էդլիրա, M.Sc. (EuNC, Տիրանայի Եվրոպական Համալսարան Ալբանիա)

Բիթի Էրգեստ, M. Sc.    (Տիրանայի Եվրոպական Համալսարան, Ալբանիա)

Բրաուեր-Լաց Դեյրդրե, M.A. Ph.D.  (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Բրաուն, Քրիստոֆեր, M.A. (Բելֆաստի Քուինս Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Բուստին Ռոբերտա M.S., Ph.D. (Լուիզիանայի Պետական Համալսարան, ԱՄՆ)

Կադիս –Արրոյո Խորխե, M.Div. (Պուերտո Ռիկոյի Ավետարանական Սեմինարիա)

Կամպոս Սուսաննա, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Համալսարան, ԱՄՆ)

Կանտարելլա Դավիդե M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Համալսարան, ԱՄՆ)

Կանտարելլա Տատյաննա M.A.  (Նազովրեցու Աստվածաբանական Համալսարան, ԱՄՆ)

Կարվալիո Դանիլո M.A.  (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Կարվալիո Մաարկո  M.A.  (Կարոլինայի  Համալսարան, ԱՄՆ)

Կաստրո Տորես Մանուել, M.A., D.Th. (Հարվեստ Քրիստոնեական Համալսարան, ԱՄՆ)

Կերեդա Ջիովաննի, M.Div., Th.D. (Պապական Աստվածաբանության Ֆակուլտետ, Իտալիա)

Կրիստեսկու Պավել, M.A. Ph.D. (Բուխարեստի Համալսարան, Ռումինիա)

Կիավերելլա Պետեր, M.Div., M.A. (Տրինիտի Ավետարանական Աստվածաբանական Դպրոց, ԱՄՆ)

Կոնսիգլո Դաննիլո, M.Th. (Հյուսիս- Արևմտյան Համալսարան, Հարավային Աֆրիկա)

Կրիլլի Ելենա M.A.  (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Կսերնակ Իստվան, M.A. (Ավետարանական-Լյութերական Աստվածաբանական Ակադեմիա, Հունգարիա)

Կալբերթսոն Հովարդ, M. Div., M.R.E, D.Min. (Դենվերի Սեմինարիա, ԱՄՆ)

դե Դաննեմանն Գլորիա, M.A. (Սալամանկայի Պապական Համալսարան, Իսպանիա)

դե Խեսուս Քավակո, Տիմոտեո M.A. (Լիբերտի  Համալսարան, ԱՄՆ)

դե Ջոնգ Գիդեոն, M.A. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու  Համալսարան, ԱՄՆ)

դե Ջոնգ Ռեբեկկա, M.A. (Պոտսդամի Համալսարան, Գերմանիա)

դե Վրիս Ռոբերտ, M.A. (Նեյմեգենի Ռադբաուդի Համալսարան, Նիդերլանդներ)

Դոսի Իլլի, M.A., Ph.D. (Տիրանայի Եվրոպական Համալսարան, Ալբանիա)

Դաունի Սինթիա, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Դրուժինինա Օլգա, M.A., Ph.D. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Էչեգուիա Գասթոն, M.A. (Օլիվետ Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Էլ Քահվաջի Թոնի, M.A. (Լա Սագեսսե համալսարան, Լիբանան)

Էտիեն Վինդել, M.A.  (Վեսլիյան Սեմմինարիա, Վեսլիի Համալսարան, Ինդիանա ԱՄՆ)

Ֆերնանդես Միլան, Խուան Կառլոս, M.A. (Սենդաս, Կուբա)

Ֆերեյրա Յաբուկի, Կամիլա, B.A. (Centro Universitário Hermínio Ometto, Բրազիլիա)

Ֆլեմինգ Դեն, M.Div., Ph.D. (Աբերդինի Համալսարան, Շոտլանդիա)

Ֆլորես Պազ Մարիա Էլվա, Ph.D. (Universidad César Vallejo, Պերու)

Ջունի Ջիանֆրանկո, M.A. (Ուրբինոյի Համալսարան, Իտալիա, )

Գլենդենինգ Չեզարինա, M.A. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Գլենդենինգ Լերեյ, M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Գորման Ջոզեֆ, M.Div., D.Min. (Ֆուլլերի Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Գշվանդտեր Դորոտեա, M.Sc., M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Գշվանդտեր  Հերմանն, M.A., D.D. (Հարավային Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Գի Պատրիկ, M.A., Ph.D. (Կոլումբիայի Միջազգային Համալսարան, ԱՄՆ)

Գունարա Պրիսցիլա, M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Գուստինե Տուլիպան, Մարիա, M.A. (Միդլեսեքս Համալսարան Լոնդոն, Մեծ Բրիտանիա)

Հաբիբի Նաբիլ, M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Հադդադ Վաել, M.A. (Հորդանանի Ավետարանական Աստվածաբանական Սեմինաարիա, Հորդանան)

Հեյնիս Ջոն, M.A., M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Հալլաս Հաիդար, M.A., D.Min. (Հորդանանի Ավետարանական Աստվածաբանական Սեմինաարիա, Հորդանան)

Խուան Ջոշուա, M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Հայթ Ջերեմի, M.A. (Նազովրեցու Օլիվեթ Համալսարան, ԱՄՆ)

Հոլլեման Անտոնի, Drs. (Լեյդենի Համալսարան, Նիդերլանդներ)

Հոլլեման-Բյուդեկեր Վիլհելմինա, M.Div. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Հյուսթոն Մելոդի, B.A. (Մաունտ Վերնոն Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Հիմոն Ջինաիդա, B.A. (Միջազգային քրիստոնեական համալսարան, Ուկրաինա)

Իստրատե Քրիստինա, M.A. (Հունա-Կաթոլիկ Աստվածաբանության Ֆակուլտետ, Սլովակիա)

Իստրատե Քրիստիան, M.A. (Հունա-Կաթոլիկ Աստվածաբանության Ֆակուլտետ, Սլովակիա)

Հարա Գոնսալես Տրինո, M.A. (Հարավային Աֆրիկայի Աստվածաբանական Սեմինարիա, Հարավային Աֆրիկա)

Կավար Իբթիսսամ, M.A. D.Ed. (Հարավային Մկրտականների Աստվածաբանականան Սեմինարիա , ԱՄՆ)

Կալեդ Լասզլո, M.A., Ph.D. (Պեցսի համալսարան, Հունգարիա)

Խոբնյա  Անդրեյ, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Խոբնյա Սվետլանա, M.A., Ph.D. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Կլաուզեր  Նաթանիա, M.Sc., Ph.D. (Մյունխենի համալսարան, Գերմանիա)

Կլեշչար Սվիթլանա, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Կյոլեր Վոլֆգանագ, M.Sc., M.A., Ph.D. (Հեյդելբերգի Ռուպրեխտ-Կարլ-Համալսարան, Գերմանիա)

Մեղիքս  Մարկ, M.Div,  Ph.D. (Տրինիտի Ավետարանական Աստվածաբանական Դպրոց, ԱՄՆ)

Մասյուկ  Սիլվիա, D.Min. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Մասյուկ  Վոլոդիմիր, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Մոն Հանս-Գյունտեր, M.Div. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Մորիս-Իվանովա  Ջեսիկա, M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Նասրալլա  Ջոաննա, M.A. (Լիբանանյան Համալսարան, Լիբանան)

Նուննես Ֆիլլո Ջերալդո, M.A., D.Div.  (Միդ Ամմերիկա Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Օստերվեյկ  Սիլվիա, B.A. (COI Opleidingen, Նիդերլանդներ)

Օվերդուին Ստեպհեն, M.A. (Ազատ Համալսարան, Նիդերլանդներ)

Պաչի Վիչենցո, M. A. (Հյուսիսարևմտյան Համալսարան, Հարավային Աֆրիկա)

Պաթերսոն Թամարա, M.A. (Ուիտոն Քոլեջի Ասպիրանտուրա, ԱՄՆ)

Պերեյրա  Ռաքել, M.A. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Պերեյրա  Սամուել, M.A. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Ֆելփս  Սինթիա, M.Sc. Psychology (Հարավային Իլինոիսի Համալսարան, ԱՄՆ)

Ֆիլիպս  Ջոնաթան, M.A.  (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Ռիկկարդի Մատտեո, M.A., Ph.D. (Alma Mater Studiorum, Università di Bologna, Italy)

Ռինալդի Ջանկառլո, Ph.D. (Նեապոլի Համալսարան, Իտալիա)

Ռոդեբուշ  Ֆիլիպ, M.A. (Հարավային Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Ռոզադո Կրուզ Էդգարդո, M.A., Ph.D. (Միջամերիկյան Համալսարան, Պուերտո Ռիկո)

Սալամե Քերոլայն, M.A. (Լիբանանյան Համալսարան, Լիբանան)

Սալամե Էնդրյու, M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Սալամե Սամիա, M.A.  (Լիբանանյան Համալսարան, Լիբանան)

Սատտերլի Միշել, M.A., Psy.D. (Ջորջ Ֆոքսի Համալսարան, ԱՄՆ)

Շրոկ Ալան, M.Sc. (Արևմտյան Իլինոյսի Համալսարան, ԱՄՆ)

Շեեպպերդ Գեյզ, M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Շիպովալով Ալեքսեյ, M.A. (Մանչեսթերի Համալսարան, Մեծ Բրիտանիա)

Շնեյդերս Արթուր, M.A. (Հևերլիի Ավետարանական Աստվածաբանական Սեմինարիա, Բելգիա)

Շնեյդերս -Ռուիտեն, Անտջե, M.A. (Տինդաալ Աստվածաբանական Սեմինարիա, Նիդեռլանդներ)

Սոուզա Ֆերնանդո, M.A. (Universidade Lusófona, Պորտուգալիա)

Սոուզա Մարսիո, B.A. (Faculdade Teologica Sul Americana, Բրազիլիա)

Ստեֆանով Միլեն, M.A. (Վելիկո Տառնովոյի Համալսարան, Բուլղարիա)

Սանբերգ Ջեյ, M.Div., D.Min. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Սանբերգ Թեաննա, M.A. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

Ստուպկաի Կրիստոֆ, M.A. (Սեգեդի Համալսարան, Հունգարիա)

Սուխաննսկի Տ. Գաբոր, M.A. (Էտվյոշ Լորանդայի Համալսարան, Հունգարիա)

Սա Նոգեյրա Ֆոնտես Անտերո, M.A. (Ուեսլիի Աստվածաշնչյան Սեմինարիա, ԱՄՆ)

Ուլինգեր Պիտեր, Dipl. Theol. (Տյուբինգենի Համալսարան, Գերմանիա)

Վան Հուֆ Էդ, M.A. (Մանչեսթերի համալսարան, Մեծ Բրիտանիա)

Վարդանյան Ռոզա, M.A. (Շիրակի Պետական Համալսարան, Հայաստան)

Վարդանյան  Սեյրան, M.A.  (Մոսկվայի Ավետարանական Քրիստոնյաների Սեմինարիա, Ռուսաստան)

Վիչ Ջեյսոն, M.Div. (Նազովրեցու Աստվածաբանական Սեմինարիա, ԱՄՆ)

Վեչսեյն Ֆուլմեր Էննիկո, M.A. (Մկրտական Աստվածաբանական Սեմինարիա, Հունգարիա)

Վերա-Կրուզ Ս.Մանուելա, B.A. (Կոիմբրայի Համալսարան, Պորտուգալիա)

Վերեշ Գաբոր, M.A. (Մկրտական Աստվածաբանական Սեմինարիա, Հունգարիա)

Ուիվեր, Քոլին, M.Div., M.A. Ph.D. ((Նազովրեցու Աստվածաբանական Քոլեջ, Մեծ Բրիտանիա))

Յոկա Կամունդելել Լորդ, M.A. (Լուվենի Կաթոլիկ Համալսարան,

Բելգիա)

Ջիկեֆուս Գեյել, M.A., M.Sc. (Հյուսիսարևմտյան Նազովրեցու Համալսարան, ԱՄՆ)

# X. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «EuNC-ի Անենք Միասին 2030 Ռազմավարական Ծրագրի» EuNC-ն մտադիր է դառնալ Եվրասիայում Աստծո Թագավորության Եկեղեցու ընդլայնման առանցքային դերակատարը: Դա ներառում է տեղական եկեղեցիների, շրջանների և տարածաշրջանի հետ համագործակցության խթանումը, որպեսզի կատարվի Աստծո առաքելությունը՝ բոլոր ազգերից պատրաստել Քրիստոսանման աշակերտներ: Դրան հասնելու համար, EuNC-ն նվիրված է աստվածաբանական կրթության մեջ առաջացող միտումների և կարիքների բացահայտմանը և գնահատմանը, թե ինչպես մենք կարող ենք դրանց արձագանքել նորարարական մոտեցումներով, որոնք ընդլայնում և ուժեղացնում են մեր կրթական ազդեցությունը:

Այս առումով, Շարունակական Կրթության (ՇԿ) գործունեությունը (նախկինում չհավատարմագրված ուսումնասիրություններ) ուղղված են ծառայելու Եկեղեցուն, խթանելով այցելու անդամների ուսուցումը, աշակերտությունը, ղեկավարության զարգացումը, շարունակական ծառայողական ուսուցումը և անձնական աճը: Սա կարող է իրականացվել կարճ դասընթացների, պրակտիկումներով, սեմինարների, ուսուցումների, կոնֆերանսների և մասնագիտացված դասընթացների միջոցով: EuNC-ի այս ուսումնական միջոցառումները մատուցվում են սովորողներին իրենց ուսումնական կենտրոնների միջոցով: Սրանք այն դեպքերն են, երբ ՈւԿ-ն ակտիվորեն համագործակցում է եկեղեցու հետ (տեղական եկեղեցիներ, Շրջաններ, Դաշտեր, Տարածաշրջաններ) ուղղված հետաքրքրությունների կամ կարիքների որոշակի ոլորտներին, օգուտ քաղելով քոլեջի դասավանդման և տեխնոլոգիական ենթակառուցվածքից (օրինակ՝ մուտք դեպի EuNC-ի ամբողջական ֆիզիկական և թվային հավաքածու և առցանց հարթակներ):

ՇԿ-ն միջոցառումները հավատարմագրված ծրագրերի մաս չեն, քանի որ դրանք բխում են եկեղեցու կարիքներից, որին EuNC-ն փորձում է արձագանքել ուղղակիորեն, ճկուն և ընդունելության ավելի կարճ գործընթացով: Դրանք տեխնիկապես դասակարգվում են որպես ոչ ֆորմալ ուսուցում, որը «վերաբերում է նպատակային ուսուցման փորձին, կամ պլանավորվում և իրականացվում է համապատասխան ուսումնական

միջավայրում, բայց ֆորմալ ուսումնական ծրագրից դուրս»  (ECTE - Ուղեցույց  Ֆորմալ, ոչ Ֆորմալ և Ինֆորմալ Ուսուցման ճանաչման համար):

## ԳՐԱՆՑՈՒՄ

Ցանկացած ԾԿ միջոցառմանը մասնակցելու ցանկություն ունեցող ապագա ուսանողները, պետք է գրանցվեն տվյալ միջոցառման համար Ուսումնական կենտրոնի (ՈւԿ) կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան: Կախված ՈւԿ-ի ընտրությունից, սա կարող է ներառել՝
1) Ուսանողական Տեղեկատվական Համակարգի (SIS) միջոցով պարզեցված ընդունելության գործընթաց:
2) Ինքնագրանցում համապատասխան ուսումնական հարթակում:
3) Տեղական գրանցում, հատկապես այն միջոցառումների համար, որոնք չեն օգտագործում EuNC-ի համակարգերը:

Եթե ՈւԿ-ը օգտագործում է SIS տարբերակը, դիմորդները պետք է պաշտոնապես դիմեն EuNC-ն ընդունվելու համար «մասնակից» կարգավիճակով: Անհրաժեշտ ձևերը կտրամադրվեն ՈւԿ-ի կայքի միջոցով: Ընդունելության հատուկ ձևերը կարելի է գտնել միջոցառումը կազմակերպող  ՈւԿ-ի կայքում:

Անկախ ՈւԿ-ի կողմից ընտրված գրանցման եղանակից, 18 տարեկանից փոքր դիմորդների համար պահանջվում է հատուկ ձևաթուղթ:

Ծրագրերի կամ պարբերական դասընթացների ուսանողները կարող են գրանցվել  ԾԿ-ն ցանկացած  միջոցառման, բայց ԾԿ-ն մասնակիցներին թույլատրվում  է մասնակցել միայն ոչ հավատարմագրված դասընթացներին:  Եթե նրանք ցանկանում են մասնակցել հավատարմագրված ծրագրերի դասընթացներին, նրանք պետք է դիմեն EuNC-ին որպես ծրագրի մասնակից կամ մեկանգամյա դասընթացի ուսանող:

Նրանց համար, ովքեր չեն գրանցվել շարունակական կրթական գործունեությանը երկու անընդմեջ ուսումնական տարի, քոլեջը կարող է ավտոմատ կերպով հեռացնել նրանց:

## ՎԱՐՈՂՆԵՐ

Քանի որ, ԾԿ-ն գործողությունները ճկուն են և ունեն հստակ ուղղվածություն, վարողը կարող է լինել EuNC-ի կողմից չհավատարմագրված  ուսուցիչ: Այս դեպքում ՈւԿ-ի հանձնաժողովը պարտավոր կլինի առաջարկել վարողին,

համոզվելով, որ նշանակված անձն ունի միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և դասավանդման կարողություններ:

## ՖԻՆԱՆՄՆԵՐ

Միջոցառման վճարը սահմանում է ՈւԿ-ը: Ընդհանուր վճարը, որն օգտագործվում է վարչակազմի կողմից ամբողջ դպրոցի ծառայությունները կենտրոնացված կերպով ֆինանսավորելու համար, կգանձվի միայն այն դեպքում, եթե միջոցառումն օգտագործում է Քոլեջի համակարգերը (SIS, ուսումնական հարթակ, գրադարանային ռեսուրսներ և այլն) և կհաշվարկվի մեկ մասնակցի համար մեկ ուսուցողական ժամի համար € 0,10 դրույքաչափով:

## ՇԿ-Ն ԺԱՄԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Եթե մասնակիցը հետագայում որոշի որպես ուսանող ընդունվել հավատարմագրված ծրագրերից մեկում (հետևելով նաև ծրագրի դիմորդների ընդունելության գործընթացին), կարևոր է հասկանալ, որ ՇԿ-ն միջոցառումները (որպես ոչ ֆորմալ կրթություն) ուղղակիորեն չեն փոխանցվում կրեդիտի համար: Խնդրում ենք դիմել EuNC -ի «Արտաքին Ուսումնական Արդյունքների Ճանաչում» փաստաթղթում տրված ուղեցույցին:

## ՇԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

EuNC-ն խորապես հավատարիմ է իր անվան տակ առաջարկվող բոլոր գործունեության որակի պահպանմանը, ապահովելով, որ դրանք արտացոլեն հստակ աստվածաբանական ավանդույթը, որի վրա այն հիմնված է և ակադեմիական գերազանցությունը, որին նա նպաստում է: Սա վերաբերում է նաև ՇԿ-ն միջոցառումների զարգացմանը, հատկապես Եկեղեցու համապատասխանության, ուսուցման փորձի, որակի և վարողների իրավասության առումով: Միջոցառման մասին տեղեկատվությունը կներառվի առաջարկի մեջ, որը պետք է ներկայացվի մինչև նրա մեկնարկը:

EuNC-ն, Ակադեմիական Դեկանի միջոցով ձգտում է աջակցել և ուղղորդել Ուսումնական Կենտրոններին ՇԿ-ն միջոցառումների մշակման և զարգացման գործունեություններում և Ուսումնական Կենտրոնների միջև պոտենցիալ համագործակցությանը նպաստելու հարցում, օրինակ՝ կիսելով փորձը, բովանդակությունը կամ ռեսուրսները:

# XI. ՔՈԼԵՋԻ ԳԼԽԱՎՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ

EuNC-ի ընդհանուր ղեկավարությունը և վարչակազմը բաժանված են հետևյալ տարբեր սուբյեկտների վրա՝

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**
European Nazarene College -ի մշտական վերահսկողությունը ստանձնում է Նազովրեցի Եկեղեցու Եվրոպական և Եվրասիական շրջանները ներկայացնող հոգաբարձուների խորհուրդը, որն ընտրվում կամ նշանակվում է EUNC e.V.-ի կանոնադրության և սահմանդրության համաձայն: Հոգաբարձուների Խորհուրդը հանդիպում է տարին առնվազն մեկ անգամ, և ընտրում է գործադիր կոմիտեի անդամներին: Գործադիր պաշտոնյաները կորպորացիայի (EuNC e.V.) պաշտոնական ներկայացուցիչներն են՝

**Գործադիր կոմիտեն**

| | |
|---|---|
| Նախագահ /պաշտոնական անձ | Պետեր Ուլլինգեր |
| Նախագահի տեղակալ/ պաշտոնական անձ | Բրայան Քեթչում |
| Քարտուղար/ պաշտոնական անձ | Սոնիլա Բեջտյա |
| Ռեկտոր (ըստ պաշտոնի) | Մարիա Գուստիննե Տուլիպան |

Եվրազիայի Կրթական Համահամակարգողներ

(ըստ պաշտոնի) Անտոնի Հոլլեման, Փիթեր Ռեյ

Եվրազիական Տարածաշրջանի Տնօրեն (ըստ պաշտոնի) Մարկ Լոու

**Հոգաբարձուների Խորհրդի Անդամները (BoT)**
Ալ Հալասա Մավիյա (Արաբիա - Հորդանան)
Ալ-Մադանաթ Վալիդ (Արաբիա - Հորդանան)
Բեյջա Սոնիլա (Ալբանիա-Կոսովա)
Բուր Վաուտեր (Բենիլյուքս)
Կրիստուրիան Օանա (Ռումինիա)

Ֆինկ  Դանիել (Իտալիա)
Գուստին  Իմրե (Հունգարիա)
Հոլլեման Անտոնի  (Բենիլյուքս)
Գիմոն Ջինաիդա (Ուկրաինա-Մոլդովա)
Քեթչում Բրայան (Ֆրանսիա)
Լոպես Դիեգո (Իսպանիա)
Տիբի Ստեֆան (Արաբիա - Իսրայել)
Սալամե Էնդրյու (Արաբիա – Լիբանան)
Ուլինգեր Պիտեր (Գերմանիա)
Վարդանյան Սեյրան (Հայաստան)
Ուոլ  Մարտին (Գերմանիա)
Յաքուկի, Քրիստիան (Պորտուգալիա)
Եմբերգենովա Ժիբեկ (Կենտրոնական Ասիա)
Հյուսիսային և Հարավային Ռուսաստանի ներկայացուցիչները ցուցակում չեն: Հաջորդ քոլեջի ուսանողական ներկայացուցչի ընտրության գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է:

**ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԻՄ**

Առաջնորդական թիմը (ԱԹ) ղեկավարում է EuNC-ն և հաշվետու է Հոգաբարձուների Խորհրդին, ինչպես նաև Նազովրեցու Եկեղեցու Եվրասիայի Տարածաշրջանին: Ռեկտորը ԱԹ-ի նախագահն է: ԱԹ-ը բաղկացած է հետևյալ պաշտոններից՝

| | |
|---|---|
| **Ռեկտոր՝** | Մարիա Գուստիննե  Տուլիպան |
| **Ակադեմիական Դեկան՝** | Մատտեո Ռիկարդի |
| **Գրադարանային Ծառայությունների և Տեղեկատվական Տեխնոլոգիաների Գծով Տնօրեն՝** | Ալան Շրոկ |
| **Գրանցող՝** | Ռակել Պերեյրա |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ուսումնական ծրագրերի հանձնաժողովը պատասխանատու է EuNC-ի ուսումնական ծրագրի համար: Հանձնաժողովի անդամները պատասխանատվություն են կրում ուսումնական ծրագրի որոշակի կլաստերի, կամ որակի ապահովման որոշակի ոլորտների համար: Հանձնաժողովը բաղկացած է հետնյալ անձանցից.

Նախագահ՝ (Ակադեմիական Դեկան) Մատտեո Ռիկարդի

Խմբերի Ղեկավարներ՝

Խումբ A (Աստվածաշունչ) Վոլֆգանգ Կյոլեր

Խումբ B (Աստվածաբանություն, Ավանդություն և Ինքնություն) Օլգա Դրուժինինա

Խումբ C (Աստծո Առաքելությունը, Եկեղեցի, Կոչում) Պրիսցիլլա Գուիվերա

Խումբ D (Ծառայողական Հմտություններ) Մատտեո Ռիկարդի

Խումբ E (Ակադեմիական Հմտություններ և Ընդհանուր Ուսումնասիրություններ) (Անվտանգության նկատառումներից ելնելով՝ անունը բաց է թողնված)

Ռեկտոր՝ (ըստ պաշտոնի) Մարիա Գուստինեն Տուլիպան

## ԳԼԽԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆՁՆԱԿԱԶՄ

**Գրանցողի Օգնական՝** Կարոլին Սալամե

**Համայնքային Խնամքի Համակարգող՝** Դեբորա Շերոկ

**Հետաքրքրված կողմերի Ներգրավման Համակարգող ՝** Դեննիս Լիսկե

**Ուսանողական Ներկայացուցիչների Համակարգող՝** Դեննիս Լիսկե

**Տվյալների Պաշտպանության Պատասխանատու՝** Տանյա Բաում

**Ֆինանսական Պատասխանատու՝** Տանյա Բաում

**SS Օգնական՝** Վոլֆգանգ Կյոլեր

ՌւԿ  Աղմինիստրացիաների Վերահսկիչ`                    (Անցումային փուլում)

# XII.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

European Nazarene College-ը մեկ դպրոց է՝ բազմաթիվ ուսումնական կենտրոններով (ՈՒԿ), որոնք ուսանողներին տրամադրում են իրենց կրթական ծրագրերն ու ծառայությունները: European Nazarene College-ը, որպես կանոն, առաջարկում է կես դրույքով ուսուցում ընդունող երկրի լեզվով հետևյալ ուսումնական կենտրոններում՝ Ալբանիա-Կոսովո, Արաբիա, Հայաստան, Կենտրոնական Ասիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունգարիա, Իտալիա, Պորտուգալիա, Ռուսաստան, Իսպանիա, Նիդեռլանդներ, Ուկրաինա-Մոլդովա և Թվային Կամպուս (առաջարկում է Անգլերեն դասընթացներ, սպասարկում է բազմաթիվ երկրներ):

Յուրաքանչյուր ուսումնական կենտրոն, աջակցվում է երեք հիմնական վարչական կառույցների կողմից՝

ՈւԿ-ի Համակարգող: Պատասխանատու է Ուսումնական Կենտրոնին անհրաժեշտ ղեկավարություն տրամադրելու, նաև հաստատված ձեռնադրության ուսումնական ծրագիրը իրականացնելու համար:

ՈւԿ-ի Ադմինիստրատոր: Պատասխանատու է Ուսումնական Կենտրոնի վարչական գործընթացներում Ուսումնական Կենտրոնի Համակարգողին աջակցելու համար:

Ուսումնական Կենտրոնի Կոմիտե: Պատասխանատու է ՈւԿ-ի գործունեության վերահսկման համար, և կազմված է հետևյալ անդամներից՝ ՈւԿ Համակարգողից (ի պաշտոնե), ՈւԿ Ադմինիստրատորից (ի պաշտոնե), ՈւԿ Ուսանողական Ներկայացուցչից (ի պաշտոնե), Հոգաբարձուների Խորհրդի անդամներից (ի պաշտոնե), ՈւԿ դասախոսական կազմի ներկայացուցչից, շրջանի ղեկավարության և 1-3 ընդհանուր անդամներից:

Այս Կենտրոնների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք ստորև նշված հատուկ կայքերը:

**EuNC Ալբանիա-Կոսովո Ուսումնական Կենտրոն**
https://albkos.eunc.edu/

EuNC Արաբական Ուսումնական Կենտրոն
https://arabic.eunc.edu

EuNC Հայկական Ուսումնական Կենտրոն
https://enf.eunc.edu/

EuNC Կենտրոնական Ասիայի Ուսումնական Կենտրոն
https://enf.eunc.edu/

EuNC Թվային Կամպուս
https://digitalcampus.eunc.edu/

EuNC Ֆրանսիական Ուսումնական Կենտրոն
https://france.eunc.edu/

EuNC Գերմանական Ուսումնական Կենտրոն
https://gemeindeakademie.eunc.edu/

EuNC Հունգարական Ուսումնական Կենտրոն
https://hungary.eunc.edu/

EuNC Իտալական Ուսումնական Կենտրոն
https://italia.eunc.edu/

EuNC Նիդերլանդների Ուսումնական Կենտրոն
https://nl.eunc.edu

EuNC Պորտուգալական Ուսումնական Կենտրոն
https://cep.eunc.edu/

EuNC Ռուսական Ուսումնական Կենտրոն
https://enf.eunc.edu/

EuNC Իսպանական Ուսումնական Կենտրոն
https://es.eunc.edu/

EuNC Ուկրաինա- Մոլդովա Ուսումնական Կենտրոն
https://enf.eunc.edu/

# XIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասցե: Frankfurter Strasse 16-18
63571 Gelnhausen, Germany

Հեռախոս: (+49) (0) 6051 5387330

Էլ. Փոստ: office@eunc.edu

Վեբ կայք: www.eunc.edu

EuNC-ի Բանկային հաշիվը VR Bank Main-Kinzig-Buedingen (Germany)
IBAN: DE13 5066 1639 0003 4573 03
BIC: GENODEF1LSR

Գաղտնիության քաղաքականությունը: https://www.eunc.edu/privacy-policy/

Լեզուն: Որպես բազմալեզու և ապակենտրոնացված հաստատություն, EuNC-ն ուսուցումն ու ուսումնական կենտրոնի գործունեությունը իրականացնում է համապատասխան տեղական լեզուներով: Այնուամենայնիվ, ընդհանուր վարչարարության, ներքին կառավարման, հավատարմագրման և վավերացման նպատակներով, հաղորդակցման լեզուն Անգլերենն է: Ուղղագրության կանոնների համար, սովորաբար օգտագործվում է բրիտանական անգլերենը (en-GB):

Ուղեցույցի տարբերակ: Թարգմանության մեջ անհամապատասխանությունների դեպքում որոշիչ է կատալոգի Անգլերեն տարբերակը: